<p>Ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • կան հումքի նյութեր՝ ամբողջական փեխնուղղիական շղթա փեղադրելու համար • փեղական հնարավորություններ և արտասահմանյան գիտելիքներ • ապակենարոնացված՝ ընդհանուր ցանցին միացված արտադրության՝ իրավաբանական և առևտրային հնարավորություն • փեխնուղղիայի փոխանցում ընդունելու համար փեղական ներուժ՝ և էներգետիկայի բնագավառում նախագծեր մշակելու և իրագործելու կարողություն • կա օրենսդրական հիմք՝ ընդհանուր ցանցին վաճառելու համար 	<p>Թույլ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • սահմանափակ շուկա • սկզբնական մեծ ծախսեր • բարձր մակարդակով զարգացած էլեկտրաէներգիական ենթակառուցվածք • Անկախ նրանից, որ վերականգնվող աղբյուրների աջակցումը սահմանված է որպես քաղաքականության նպատակ բոլոր պաշտոնական փաստաթղթերում, որոնք կառավարում են էներգիայի օրենսդրական և նորմատիվային հիմքը, դեռևս ընդունված չէ որևէ հատուկ օրենսդրություն ու չեն ներդրվել լավ որոշված մեխանիզմներ, որոնք ապահովում են վերականգնվող էներգիայի պաշարների ոլորտում իրականացվող ծրագրերի իմաստալից խրախուսումներ • Նայաստանում արտասահմանյան առևտրային բանկերի փորձի պակասություն • փեղական բանկերի փորձի պակասություն և բարենպաստ վարկային աղբյուրների պակասություն (մանրածախ վաճառքի սխեմաներ) • բարենպաստ նորմատիվային /կարգավորող/ և խրախուսիչ կառուցվածի պակաս
<p>Ննարավորություններ</p> <ul style="list-style-type: none"> • արևային էներգիայի էական պաշար • ԵՄ և այլ միջազգային և դոնոր կազմակերպությունների հեղափոխվածությունը վերականգնվող էներգիայի նկատմամբ • հասարակության դրական դիրքորոշում • էլեկտրականության գնի հնարավոր բարձրացում և ավանդական կայանների համար նոր ներդրումների հնարավոր անհրաժեշտություն 	<p>Սպառնացող վրանգներ</p> <ul style="list-style-type: none"> • Որպես էներգետիկայի ազգային ռազմավարության առաջնահերթ ոլորտ դիտվում է արտմային էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ էլեկտրականության մեծածող պահանջարկին բավարարելու նպատակով, մինչդեռ գազային սեկտորի և գազայրիչ կայանների արդիականացում և հերազա զարգացումը հզոր մրցակցություն կապանանավորի արևային ՖԷ ապրանքների համար: • Գոյություն ունեցող հիդրաէներգետիկան ընկալվում է որպես “մաքուր էներգիայի” պարավորվածություններ ապահովողը: • Վերականգնվող էներգետիկայի սկզբնական՝ համեմատաբար բարձր ծախսերը վրանգի փակ են

<ul style="list-style-type: none"> • միջազգային շուկայի էքսպոնենսային անձ • գրոգաշրջիկության համար գրավիչ օբյեկտների զարգացում՝ ցանցից դուրս գտնվող վայրերում 	<p>դնում արևային էներգիայի մրցունակությունը՝ էներգիայի ազատ շուկայում:</p> <ul style="list-style-type: none"> • էներգիայի ցածր գներ՝ շնորհիվ հին կայանների ամրապնդման, բնական գազի սուբսիդավորվող գնի և այդ կայաններում արտադրվող ավելցուկ էլեկտրաէներգիայի • արտաքին ազդակներ և էներգետիկական անկախության օգուտներ քանակապես հաշվարկելու՝ քաղաքական կամքի պակասը • ավանդական էներգիայի շահախմբերի լոբիստական ուժը • տեղական արժույթի փոխանակման դրույթաչափերի անկանխադեսելիությունը
---	--

2.4 Շուկա ներթափանցելու պլանի մշակում

Շուկա ներթափանցում որոշվում է որպես “տվյալ շուկայում հաբուկ ապրանքի վաճառքի խորություն”: Ակնհայտ է, որքան ավելի խորն է ներթափանցումը, այնքան բարձր է ապրանքի վաճառքի ծավալը: Այս գլխում մենք անդրադառնում ենք այնպիսի հարցերին, ինչպիսիք են՝ նշանակելի շուկաներ, խոռոչ շուկաներ, բաշխում, շուկայավարում /մարկետինգ/, գնագոյացում, շահույթի գնանցքներ, կապիտալ [արտադրամիջոցների] ներդրումներ, արգելքներ և ժամանակային շրջանակներ:

Այդ գլուխը շուկայավարման համար պարզապես ներթափանցման պլան չէ, բայց ծառայում է որպես հեղուկ մանրամասն ռազմավարության ուղեցույց, որն երաշխավորում է հերևողական մոտեցում՝ ԶՄԳ խառը սիվիկոնային նյութի հիման վրա ՖԷ մոդուլներ առաջարկելու նպատակով: Ներառում ենք մի քանի ներածական խոսք՝ շուկայավարման ռազմավարության փարբեր սցենարներ և նրանց կենտրոնացման մասին ավելի լավ պատկերացում կազմելու, ինչպես նաև շուկա ներթափանցման պլանի այս ուղեցույցին՝ հիմնավորված կողմնորոշում փալ ի վիճակի լինելու համար:

Մանրամասն շուկայավարման ռազմավարություն սրեղծելուն հաջորդող պրոցեսում հարկավոր է հաշվի առնել բազմաթիվ գործոններ և նպատակներ: Ընդհանուր առմամբ, դա արվում է չորս սցենարներից մեկով:

1. Եթե շուկան շար գրավիչ է և ձեռնարկությունը արդյունաբերությունում ամենահզորներից է, ապա այն պետք է ցանկանա ներդնել ունեցած լավագույն պաշարներ՝ իր ապրանքին սատարելու համար:
2. Եթե շուկան շար գրավիչ է, սակայն ձեռնարկությունը արդյունաբերությունում ամենաթույլներից է, ապա այն պետք է կենտրոնանա ձեռնարկությունը ամրապնդելու վրա, օգտագործելով իր ապրանքը որպես ցարկահարթակ՝ այդ նպատակին հասնելու համար:
3. Եթե շուկան հարկապես գրավիչ չէ, սակայն ձեռնարկությունը արդյունաբերությունում ամենահզորներից է, ապա նրա ապրանքի արդյունավետ շուկայավարման և վաճառքի ջանքերը լավ կճառայեն մոտակա ժամկետում շահույթներ ձևավորելու նպատակին:
4. Եթե շուկան հարկապես գրավիչ չէ, իսկ ձեռնարկությունը արդյունաբերությունում ամենաթույլներից է, ապա նա պետք է առաջ փանի իր ապրանքը միայն եթե այն հիմք է ծառայում տվյալ ձեռնարկության այլ գործարարական ոլորտների ավելի շահութաբեր մասի համար (օրինակ՝ եթե այդ սեզմները լրացնում է ապրանքների որոշ գծի ընդգրկույթը) կամ եթե այն կլանում է ավելի շահութաբեր հարվածի որոշ վերադիր ծախսերը: Նակատակ դեպքում, ձեռնարկությունը պետք է որոշի այդ ապրանք

արքայադրող հապվածից հրաժարվելու՝ ծախսերի փեսանկյունից ամենաարդյունավետ ճանապարհը:

Աշխարհի ներկա և միջին ժամկետի շուկայական միջավայրում կիրառելի են սցենարներ 1-ինը և 2-րդը, և մենք պետք է ընտրենք ձեռնարկության համնդհանուր շահերի և սպրանքի համար առավել օգտակար ուղղություն, որն ամենարդյունավետ կլինի շուկայում: Կարելի է քննարկել հետևյալ երեք ռազմավարությունները.

1. **Ծախսերի առաջնության ռազմավարությունը** հիմնվում է այն գաղափարի վրա, որ ձեռնարկությունը կարող է արքայադրել և շուկա դուրս հանել բարձրորակ մի սպրանքավելի ցածր ծախսերով, քան նրա մրցակիցները: Այդ ցածր ծախսերը պետք է փոխակերպվեն արդյունաբերության համար միջին մակարդակից բարձր շահույթի գնանցքերին: Ծախսերի առաջնության ռազմավարության աջակցելու համար պարքադիր ներկա պայմաններից մի քանիսը ներառում են. ներդրումային կապիտալի գերազանց մաքսիչություն, շրջանառու միջոցների ընթացիկ առկայություն, պրոցեսի լավ ինժեներական հմտություններ, աշխատուժի սերտ կառավարում, գիրահետազոտական և նախագծային մասի գերազանց մաքսիչություն (սերտ համագործակցությամբ կամ՝ սեփական), էժան արքայադրական միջավայր և էժան բաշխում:
2. **Տարբերակման ռազմավարությունը**՝ դա մի ռազմավարություն է, որ ստեղծում է “արդյունաբերությունով մեկ” եզակի համարվող սպրանք: Շեշտը կարող է դրվել սպրանքափեսակի վարկանշի, սեփական փոխնուրոգիայի, առանձնահատկությունների, գերազանց սպասարկման, բաշխիչ հզոր ցանցի կամ այլ կողմերի վրա, որոնք կարող են հազվագյուտ լինել փվյալ ՖԷ արդյունաբերությունում: Նման յուրահատկությունը նույնպես պետք է արքայացուլի արդյունաբերությունում միջին մակարդակից բարձր շահույթի գնանցքերում: Ի լրումն դրան, պետք է առկա լինեն փարբերակման ռազմավարություն սատարելու համար անհրաժեշտ պայմաններից մի քանիսը, ներառյալ, շուկայավարման հզոր կարողություններ, սպրանքի արդյունավետ փոխնուրոգիական մշակում, ֆունդամենտալ հետազոտություններ իրականացնելու կարողություն և լավ համբավ:
3. **Կենտրոնացված ռազմավարությունը** նշված ռազմավարություններից գուցե ամենաբարդն է, քանի որ այն ավելի “ինտենսիվ” ձև է, քան ծախսերի առաջնության կամ փարբերական ռազմավարությունը: Այն նախատեսված է անդրադառնալու շուկայափետի “կենտրոնացված” հապվածներին (որոնց հաճախ անվանում են խոռոչ շուկաներ) և սովորաբար այն ժամանակ, երբ ծախսային առաջնության կամ

փարբերակման “համաչափ” կիրառումը անփրկելի է: Ռազմավարության հիմքում ընկած հայեցակարգը կայանում է նրանում, որ հափուկ ննափակին պետք է ծառայել այնպիսի բացառիկ եղանակով, որի հետ ուրիշները մրցակցել չեն կարող: Սովորաբար դա նշանակում է, որ ուշադրության կենտրոնում կլինի փոփոխ արդյունաբերության մեջ ներգրավվածներիին համեմատ էապես ավելի փոքր շուկայի հափված, բայց նվազագույն մրցակցության շնորհիվ շահույթի գնանցքները կարող են շատ բարձր լինել: Նախկինում նշված երեք ռազմավարությունները, նախատեսվող ապրանքը (ՖԷ մոդուլներ, պատրաստված ԶՄԳ/խառը պոլիսիլիկոնային նյութից), Նայաստանում արտադրական միջավայրի ցածր արժեքները, հուսալի և լավ որակի էներգամատակարարումը և բարձրորակ հումք նյութի մատչելիությունը, *առաջարկվող մոդելներն է թիվ 1-ին ռազմավարությունը:*

Այնուհանդերձ, եթե ընտրվի 1-ին ռազմավարությունը, շահագրգիռ կողմին խորհուրդ է փրվում ուղղաձիգ միացվածությամբ կապել իր գործունեությունը շարունակող բոլոր գործարարական օղակների ամբողջ շղթայով ի վար (մինչև փեդալում և PPA): Դրա պարճառներն են. ներկա միաբերումը, համաշխարհային փոփոխական ճգնաժամով արագացված, խաղից դուրս կմղի թույլ մասնակիցներին: Դա վերջ կդնի ներկա մասնավորման, կապիտալի գերշիկացած շուկան և կաջակցի արդյունաբերության ավելի հզոր մասնակիցների ձևավորման, որոնք կվերածվեն հսկաների՝ գանգվածային ծավալարդյունք ապահովելու՝ խաղի կանոններ փոփոխող կարողությամբ, ինչի շնորհիվ նրանք լուրջ հավակնորդներ են դառնալու ավանդական էներգետիկ աղբյուրների շարքում: Միաբերումը պատրաստվում է պարփակել գնային և մատակարարման ամբողջական շղթայի մնացած մասնակիցներին: Օրինակ՝ պոլիսիլիկոնի “դաշտում” խաղացողներ, էլեմենտներ արտադրողներ և նույնիսկ համայնքային էներգահամակարգեր՝ կսկսեն վերահսկել իրենց պահանջարկը և կկարողանան իրենց թույլ փոփոխ փոփոխ շղթայով ի վար գործող հարմար մասնակիցներին՝ ընդգրկելով նրանց սեփական գործառնական փաթեթի մեջ, նույնիսկ ընթացող փոփոխական ճգնաժամի պայմաններում: Դա խիստ կուժեղացնի հսկողությունը շահույթի գնանցքների և եկամուտների հոսքի նկատմամբ և արդյունաբերության հայտնվող հսկաները (էլեկտրամատակարարման ծառայություններ ներառյալ) կգրավեն հնարավոր ապագա արևային շուկայի մեծ մասը, որը ըստ հաշվարկների 2020թ կհասնի առնվազն փարեկան 30 գՎտ մակարդակին:

Ռազմավարություն 2-ը չի առաջարկվում, քանի որ այն պահանջում է հզոր համբավ ունենալ: Դրանից բացի, ԶՄԳ-ի հիման վրա պատրաստված ՖԷ մոդուլների նպատակը չի համապատասխանում ռազմավարություն 2-ին: ԶՄԳ-ի հիման վրա ՖԷ մոդուլներ պետք է նվազագույն գնով լինեն և ոչ եզակի, այլ ավելի շուրջ՝ սերիական կարգի:

Ռազմավարություն 3-ին պահանջվում է շուկայի ընդարձակ “նոու-հաու” շուկայի բարձր շահավետությամբ փոքր հափվածը նույնացնելու համար: Պետք է խոստովանել, որ շահութաբեր բիզնես առաջարկող նման շուկաներ իսկապես շար լեն ինելու, բայց եթե խոռոչ շուկան սխալ է ընտրված, ապա ընկերությունը շուտով պարտություն կկրի:


Ռազմավարություն 1-ով առաջնորդվելով, կարելի է հասնել ավելի մեծ շահույթների, քան 3-րդի դեպքում, բայց միևնույն ժամանակ էապես ավելի մեծ են լինելու նաև կապիտալ [արտադրամիջոցների] ծախսերը: Նայաստանում արտադրություն սկսելու շահագրգիռ կողմ պետք է ուշադրությամբ գնահատի սեփական ֆինանսական հնարավորությունները, գործարարական ռիսկը, տեղում առկա փորձը և գիտելիքները և հնարավոր գործընկերներին: Նման մանրամասն SWOT վերլուծություն կատարելուց հետո, կողմը ի վիճակի կլինի սահմանել իր գործարարական ռազմավարությունը՝ 1-ինը կամ 3-րդը”

Ռազմավարություն 1-ը գերազանց գործարարական հեռանկար է բացում, սակայն պահանջում է մեծ ֆինանսական հնարավորություններ՝ էական կանխիկ գումարներ՝ ինչպես նաև երկարաժամկետ պլանավորում: Մյուս կողմից, ռազմավարություն 3-ը նույնպես գերազանց հնարավորություն է ընձեռում, օրինակ՝ սահմանափակ միջոցներով մի ընկերության համար, բայց միաժամանակ պահանջում շուկայի լավ “նոու-հաու” և հզոր միջազգային համագործակից գործընկերներին: Երկու ռազմավարություններն էլ խիստ կախված են Նայաստանում արտադրություն սկսող ընկերության մասնագիտացումից: Կարիք չկա շարունակել ռազմավարությունների քննարկումը, քանի որ նրանք մաս են կազմում ընկերությունների SWOT վերլուծության հիման վրա շուկա ներթափանցման մանրամասն պլանի, ուստի այժմ կանդրադառնանք շուկա ներթափանցման ցակացած պլանի ընդհանուր խնդրին:

2.4.1 Նշանակետ շուկաներ

Նամաձայն 2.2 և 3.1 գլուխներում ներկայացված մեր գնահատականի, հաջորդ փաստարկ շուկաները գտնվում են Եվրոպայում, Ճապոնիայում, Կորեայում և ԱՄՆ-ում (խնդրում ենք նաև նայել նկար 3-ը՝ 2.2-րդ գլխում): Այդ շուկաները (որոնց հաշվին 2008թ հասնում էր 97%-ը) ղեկավարվում են հզոր և կայուն քաղաքականությունների կիրառմամբ և ամենամոտ են ընդհանուր էներգահամակարգի հետ հավասարակշռության /պարիպետին/: 2010/2011թ որպես աճող շուկա կարող է հանդես գալ Ավստրալիան, սակայն նրան 2-4 փարի կպահանջվի գիգավատրային շուկա դառնալու համար: Չինաստանը վերսկսում է բանակցություններ՝ ՖԷ-ներով գիգավատրային էլեկտրակայանների մասին և հայտարարել է Տիբեթյան բարձրավանդակում մեկ նախագիծ կառուցելու մասին (1 GW): Կարծում ենք, որ Չինաստանի շուկան շար խոստումնալից է, սակայն, գործարարական պլանավորման նպատակներից ելնելով, առայժմ ոչ կայուն: Ամենայն հավանականությամբ

առնվազն հաջորդ հինգից վեց փարվա ընթացքում Չինաստանը չի ունենա պահաջվող կենսունակությունը:



Նկար 11. Ընդհանուր էներգահամակարգի հետ հավասարակշռության մոտիկությունը (տես. “Green Cross International”)

Նամապարասխան և հաջողակ գործարարական ռազմավարություն նախագծելու նպատակով ամենահեռանկարային շուկաներն են նրանք, որոնք մոտենում են ընդհանուր էներգահամակարգի հետ պարիտետի հասարաման: 2015 թ նրանց շարքում կլինեն ԱՄՆ-ի մի քանի նահանգները (Կալիֆորնիան), Ճապոնիան, Իսրայելը, Իսպանիան և Իտալիան: Ստորև բերվող նկար 11-ի վերևի աջ կողմի անկյունային մասում նշվում են պարիտետի հասարաման մոտ գտնվող երկրները (Նայաստանում մանրածախ էլեկտրականության գինը մոտ է 0.07 ԱՄՆ դոլար/կՎտ.ժ համար՝ 2009 հունվար ամսվա դրությամբ): Նայաստանը հեռու է ընդհանուր էներգահամակարգի հետ հավասարակշռությունից, չնայած որ ունի ավելի բարձր արևային ելք քան կարևորագույն բազմաթիվ շուկաներ, այդ թվում, Գերմանիան, Ֆրանսիան և Ճապոնիան:

Երբ նվաճվի պարիտետը ընդհանուր էներգահամակարգի հետ, պահանջարկը կլինի էապես անսահմանափակ և շուկան հետ կրեդաշարժվի՝ դեպի վաճառողի շուկա:

Ի նկարի ունենալով 2012թ-ին լիարժեք արդադրությանն անցումը, խորհուրդ ենք փալիս հերևայլ նշանակետ շուկաները.

2012թ (անմիջապես)	Իրալիա, Գերմանիա, Ճապոնիա, Կալիֆորնիա, Իսպանիա, Իսրայել, Կորեա
2015թ (ծագող)	Ավստրալիա, Նյու Ջերսի, Տեխաս, Նյու Մեխիկո, Արիզոնա, Ֆրանսիա, Նունաստրան, Կանադա, Տայվան, Պորտուգալիա
2020թ (միջին ժամկետի)	Չինաստան, Եվրոպայի մնացած մասը, ԱՄՆ-ի մնացած մասը, Ինդիա, Սինգապուր
2025թ	Նարավարենելյան Ասիա, ASEAN-ի փարածաշրջան, Նարավային և Կենտրոնական Ամերիկա
2030թ	

(երկարաժամկետ) Աֆրիկա, Միջին Արևելք, Կենտրոնական Ասիա

Վերևում ներկայացված ցանկը հաշվի է առնում էներգահամակարգին միացված ՖԷ շուկան: Արտահամակարգային շուկաներ նույնպես լավ գործարարական հեռանկար ունեն և ըստ հաշվարկների պետք է աճեն ներկա 10% մակարդակից մինչև գիգավատային շուկա գալիք հինգ փարվա ընթացքում: Դեռ ավելի քան 2 միլիարդ մարդու համար էլեկտրականությունը հասանելի չէ (հաճախ նաև մաքուր ջուրը): Եվրոպայում արագ զարգացող ՖԷ շուկաների վերջին 4 փարվա մեջ այդ շուկան լավ չէր շահագործվել: Ընդհանուր ցանցին միացած շուկաներ ավելի մեծ շահույթներ էին վճարում ապրանքների համար և ավելի արագ գործառույթներ ապահովում, սրանով թողնելով արտահամակարգային շուկաները բաց՝ ապագայում սպասարկման համար:

Շուկա նոր մրնողը պետք է երկհարկանի մի ռազմավարություն ի նկատի ունենա. 80%-ը կենտրոնանում է էներգահամակարգին միացած ՖԷ կիրառումների վրա (ներառյալ BIPV [չենքում ներկառուցված ՖԷ] և էլեկտրակայաններ) և 20%-ը՝ արտա-համակարգային ՖԷ կիրառումների վրա:

Ամփոփելով ասենք, որ մինչև 2020 թիվ հեռանկարային գործարարական ռազմավարության համար նշանակետ շուկաները և կիրառումների վրա կենտրոնացումը խորհուրդ է փրվում հերևյալ կերպ.

Ընդհանուր համակարգին միացած ՖԷ շուկա	80%	Նշանակետ շուկաներ
- BIPV	10%	- Գերմանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Կորեա, Ճապոնիա
- Էլեկտրակայաններ	50%	- ԱՄՆ, Գերմանիա, Իրալիա, Ֆրանսիա, Կորեա, Իսրայել, Չինաստան
- Առևտրային կայանքներ	20%	- Եվրոպա, ԱՄՆ, Ճապոնիա, Կորեա, Տայվան, Կանադա

Արահամակարգային ՖԷ շուկա	20%	Նշանակեք շուկաներ
- Նոսահաղորդակցում	15%	- Ինդունգիա, Աֆրիկա, Ֆիլիպիններ, Ռուսաստան, Չինաստան և բազմաթիվ ուրիշներ
- Գյուղական էլեկտրաֆիկացում	5%	- Աֆրիկա, Տիրեթ, Մոնղոլիա, Նարավային Ամերիկա և ուրիշներ

2.4.2 Բաշխում

Կան մի քանի մեթոդներ, թե ինչպես բաշխել վերջնական արդյունքը սպառողներին: Դրանք են.

1. **Վաճառքը տեղում** ներառում է ապրանքի վաճառք “դաշտային” վաճառքի կազմակերպության միջոցով, որն այցելում է հնարավոր օբյեկտներ վաճառք իրականացնելու նպատակով:
2. **Ուղղակի վաճառք** ներառում է ապրանքի վաճառք, օգտագործելով ուղղակի վաճառքի ներքին կազմակերպություն, որը կատարում է ամբողջ վաճառքը ինտերնետով, հեռախոսով կամ փոստային պատվերներով:
3. **Մեծածախ վաճառք** ներառում է ապրանքի վաճառք միջորդների կամ՝ գործակալների օգնությամբ՝ մանրածախ վաճառքի կազմակերպություններին ապրանքը բաշխելու նպատակով:
4. **Մանխաճախ վաճառք** ներառում է ապրանքի վաճառք սպասարկման մանրածախ բաշխման լրիվ ուղիով:

Եթե որպես վեջնական արտադրանք նախատեսվում է ունենալ ՖԷ մոդուլ, ապա բաշխման համար կարելի է քննարկել մեթոդ 2-ը, 3-ը և 4-ը: Ներկայումս Մեթոդ 2-ը հաճախ է օգտագործվում, սակայն կարծում ենք, որ այն ժամանակ, երբ ՖԷ-ն դառնա փարավաճ սերիական ապրանք (ընդհանուր էներգահամակարգի հետ պարիպերային շուկաներում), այդ մեթոդը շոշափելի գործարարական ներուժ կունենա և այսօր սակավադեպ կայունացած ընկերություններ են գնահատում այդ հնարավորությունը: Ապագայում համարյա բոլոր ապրանքների, այդ թվում՝ ՖԷ-ի համար շուկայատեղը կլինի Ինտերնետը: Մեթոդ 3-ը պահանջում է մեծածախ վաճառողների լավ ցանց և հանդիսանում է ՖԷ գործարարությունում ամենահաճախ օգտագործվող բաշխման մեթոդը: Այս մեթոդն ունի առավելություններ (ընկերության ավելի փոքր կառուցվածք, կենտրոնացում արտադրության վրա, հիմնական բիզնես, ճկունություն) և թերություններ (պակաս եկամուտներ, մակնիշի համբավի հսկողության բացակայություն, մեծածախ վաճառողի և օգտագործողի միջև փոխազդեցության հսկման բացակայություն):

Ինչպես բացատրվել է ավելի վաղ, կա միտում ունենալու ամբողջությամբ ուղղաձիգ միասնացված ձեռնարկություն, ինչի շնորհիվ հնարավոր է հսկել գործարարության հոսանքն թե՛ ի վար և թե՛ ի վեր գրավող օղակները: Այդ փաստարկի հիման վրա և այն պայմանով, որ առաջնորդվում ենք ռազմավարություն 1-ով, կարելի է խորհուրդ փայ մեթոդ 4-ը: Եթե հեղուկում ենք ռազմավարության 3-ին, ապա բաշխման համար կարելի է օգտագործել մեթոդ 2-ը և 3-ը:

2.4.3 Շուկայավարում /մարկեթինգ/

Գոյություն ունեն շուկայավարման երկու հիմնական ռազմավարություններ՝ “հրել” և “քաշել”: “**Տրելու**” ռազմավարությունը առավելագույն կերպով կիրառում է բաշխման բոլոր առկա ուղիներ՝ ապրանքը շուկայի մեջ “հրելու” համար: Դա սովորաբար պահանջում է առաքաձեռ գեղջեր, որոնց հաշվին կարելի է հասնել նպատակին՝ խթանելով ապրանքին աջակցող ուղիները և նվազեցնելով գովազդի անհրաժեշտությունը:

“**Քաշելու**” ռազմավարությունը պահանջում է ունենալ ուղղակի շփման եզր՝ վերջին օղակում ապրանք օգտագործողի հետ: Աջակցման առաջին փուլերում բաշխման ուղիների օգտագործումը նվազագույնն է լինում և պահանջվում է գովազդի մեծ կողմնակցություն ապահովել: Նպատակ է դրվում “քաշել” հնարավոր գնորդներին դեպի բաշխման փարբեր կետեր, սրբեղծելով այնպիսի պահանջարկ, որին բաշխման ուղիները անբեռնելի են կարող:

Երկու ռազմավարությունների դեպքում էլ *պարտադրյալ կերպով* պետք է մասնակցել ՖԷ-ին նվիրված միջոցառումներին, ներկայացնելով ապրանքը և փեղկակցնելով հնարավոր գնորդներին՝ որակի, գնի և գործող ընկերության հզորության մասին: Այսօր ՖԷ փասնյակ ցուցահանդեսներ են կազմակերպվում, սակայն հաճախ շար դժվար է որոշել նրանց, ովքեր իսկապես առաջափար են փվյալ բնագավառում: Կոպիք գնահատմամբ՝ թե՛ գլխավոր և թե՛ նշանակետ շուկաներում՝ ՖԷ բոլոր փեխնուրգիաներում արդյունաբերության ուղեցույցը փարիներ շարունակ փրամադրել են Եվրոպան և ԱՄՆ-ն: Եվրոպայում “EU PVSEC”-ը, իսկ ԱՄՆ-ում “Solar Power International”-ը՝ յուրաքանչյուրն զրավում են ավելի քան 40,000 ցուցահանդես մասնակիցներ և առնվազն 500 կազմակերպիչներ:

Մինչև շուկայավարման ցանկացած աշխատանք նախաձեռնելը, ապրանքը պետք է ենթարկել պարշած հավաստագրման /սերփիֆիկացիայի/: ՖԷ արդյունաբերությունում դա կատարում է Միջազգային Էլեկտրատեխնիկական Տանձնաժողովը (IEC): IEC-ն ունի ՖԷ ապրանքների բազմաթիվ սրանդարներ, իսկ ՖԷ մոդուլների դեպքում (բյուրեղային)՝ ԶՄԳ/ c-Si խառնուրդով ՖԷ մոդուլի համար պահանջվում է IEC 61215 հավաստագրում: Գործընթացը կարող է բավականաչափ երկար լինել՝ պահանջելով 8-ից մինչև 16 շաբաթ, իսկ արժեքը փարբեր է փորձարկող փարբեր ինսփիրուտների համար: “TUV Rheinland”-ը

ամենաթանկարժեք է, որտեղ մոդուլի փեսակի հավասարագրում (համապարասխանության փորձարկում ըստ IEC 61215) կարող է արժենալ 10,000 մինչև 15,000 Եվրո: Նավասարագրման մյուս կարևոր մաս է՝ դա SK “դաս” II (երկակի մեկուսացմամբ էլեկտրական սարք) հասարակում սրանալն է: Բոլոր բարձրորակ ապրանքները SK II-ով հասարակված են և երաշխավորում են մարդկանց անվտանգությունը փեղադրան և շահագործման ժամանակ:

Շուկայավարման արշավ սկսելուց առաջ հարկ է հաշվարկել նաև հավասարագրման երկարարև գործընթացը:

2.4.4 Գնորոշում

Երբ ապրանքի համընդհանուր նպատակը որոշված է և ընտրված է գործարարական ռազմավարությունը, պետք է որոշել թե ինչպիսի կառուցվածք պետք է ունենա փվյալ ապրանքի գնորոշումը: Գնորոշման ռազմավարության վրա հիմնական ազդեցություն ունեն ընկերության գույր եկամտի պահանջը և շուկայի երկարաժամկետ հսկողության նպատակները: Նիմնականում, երեք ռազմավարություն կա.

1. **“Սերուցքաքաշ” ռազմավարություն.** եթե ապրանքը բավականաչափ փարբերակված է՝ բարձր գին արդարացնելու համար, իսկ ընկերությունը ցանկանում է արագ կերպով կանխիկ վաստակել և ունի շուկա էապես ներթափանցելու և այն հսկելու թեքուզ նվազագույն ցանկություն, ապա գները բարձր են սահմանվում:
2. **“Շուկա ներթափանցման ռազմավարություն”.** եթե մտրակա ժամկետում եկամուտ սրանալ այնքան էլ մեծ նշանակություն չունի և ցանկություն կա արագ ներթափանցել շուկան՝ վերջին հաշվով այն վերահսկելու ակնկալիքով, ապա գները սահմանվում են շար ցածր մակարդակով:
3. **“Նամենափական գնորոշման ռազմավարություն”.** եթե ընկերությունը ՖԷ արդյունաբերության շուկայի առաջափարներից չէ, ապա առաջափարներն ամենայն հանավանականությամբ արդեն սրեղծել են “գնային ակնկալիք” փվյալ շուկայափեղում: Նման դեպքում ՖԷ մոդուլի գինը պետք է համեմափելի լինի մրցակիցների կողմից սահմանվածների հեփ:

Ռազմավարություն 2-ը որդեգրվել է “CSI”ի կիղմից, որն վաճառում է իր ՁՄԳ ապրանքները շուրջ 15%-ով պակաս քան սրանդարտ mc-Si ապրանքները: Պարզ է, որ դա **ճիշտ մոտեցումն** է շուկա արագ ներթափանցելու համար, ի նկատի ունենալով, որ վերևում քննարկված գործարարական ռիսկը Նայասփանում լիարժեք գործող կդառնա 2012 թ: Կանխափեսվում է, որ մենք դեռ կրախվենք ՖԷ մոդուլների զգալի գերառաջարկի հեփ,

ուստի ցանկացած նորեկ պետք է հարմարեցնի իր գործարարությունը և գնորոշման ռազմավարությունը համապատասխանաբար:

Նամաձայն նախորդ գլուխ 2.2-ի կանխարևեսում ենք, որ ԶՄԳ/պոլիսիլիկոնի խառնուրդի հիման վրա մոդուլներ 2011 թ-ին կունենան մոտ 1.10 եվրո/Wp, իսկ 2012 թ-ին մոտ 1.00 եվրո /Wp մակարդակ:

Նաշվարկների համաձայն, վաճառքի միջին գինը (ASP) անկում է ապրելու, երբ շուկան հագեցվելու է ՖԷ մոդուլներով: Շուկա ներթափանցելու համար ԶՄԳ ապրանքների գինը պետք է որոշվի 10-ից 15%-ով ցածր քան mc-Si ապրանքներինը: Մեր հաշվարկով վաճառքի միջին գինը ԶՄԳ-ի հիման վրա ապրանքների համար 2012 թ-ին լինելու է պակաս քան 1.30 եվրո /Wp:

Անշուշտ՝ գնորոշման, շուկայավարման և բաշխման մասին որոշման ընդունումը գրավում է արդյունաբերության և շուկայի մի քանի գլխավոր գործոնների մեծ ներգործության փակ:

2.4.5 Շահույթի գնանցքեր /սահմաններ/

Այսուհետ ներկայացվում է հնարավոր շահույթների և գալիք փարիների ընթացքում շահույթներ ձևավորելու և պահպանելու վրա ներագոյող հնարավոր գործոնների վերլուծություն: Պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները.

- Շահույթի գնանցքերի վրա ազդեցությունը հիմնված է մրցակիցների պաշարների, արդյունաբերության հանդեպ կողմնակցության, կանխիկ միջոցների դիրքի և կանխարևեսելիության, ինչպես նաև շուկայի կարգավիճակի վրա:
- Մրցակցության ուժգնությունը չափվում է մրցակիցների թվով, արտադրող օբյեկտների չափերով, շուկայի առկա սահմանափակումներով, ապրանքների միջև փարբերակումով և շուկայի աճի արագությամբ:
- Ընկերության ունակությունը՝ սահմանափակելու մատակարարների սակարկող ուժը կամ հսկելու արժեքների շղթան:

Գլուխ 2.2-ում մենք քննարկեցինք գերառաջարկի, փոփոխական արժույթների (փորձագետների կարծիքով՝ հաջորդ երկու փարվա ընթացքում եվրոն թուլանալու է, իսկ դոլարը ամրանալու) և փոփոխվող ՖԷ քաղաքականությունների սպառնալիքը, երբ սուբսիդիաները կլինեն պակաս գրավիչ քան վերջին չորս փարվա ժամանակաշրջանում: Ընդհանուր առմամբ, դա գոյալի ճնշում կգործադրի բոլոր ընկերությունների, ուստի և վաճառքի միջին գնի վրա, ի վերջո ազդելով շահույթի գնանցքի վրա: Կարծում ենք, որ շահույթի գնանցքերը 2009 թ-ին և 2010 թ-ին՝ արդյունաբերության կայունացած և լավ որակի ապրանքներ առաջարկող մասնակիցների համար դեռ կգրավեն ողջամիտ մակարդակում: Գնահատում փրվում է աղյուսակում ստորև:

Արժեքի շղթա	Շահույթի գնանցք (ընդգրկույթ)
Պոլիսիլիկոն (Միմենս)	30-50%
ԶՄԳ-Si	20-40%
Զուլուկ և Նրբաթիթեղ	20-40%
Արևայն Ֆոտովոլտայնային	20-30%
ՖԷ մոդուլներ	5-15%
BOS-ի բաղադրիչներ	10-20%
Տեղադրում / Շ և Ս	5-20%

Շարք դժվար է կանխատեսել, թե ինչպիսի կլինեն շահույթի գնանցքեր 2012 թվականից հետո, այսինքն այն ամենամոտ փարեթվից, երբ մեր կարծիքով Նայասարանում կարելի է հանձնել ՖԷ արտադրական միասնացված որևէ օբյեկտ: Պարճատն այն է, որ անհայտ է, թե ինչպե՞ս է զարգանալու շուկայի պահանջարկը, եթե նույնիսկ հաշվի առնվեն երկու փարքեր սցենարներ, և քանի՞ նոր մասնակիցներ մուտք կգործեն ՖԷ գործարարություն և հաջողությամբ կընդարձակեն իրենց արտադրությունը: Գործնական փորձի կանոններով, ամենաբարձր շահույթի 20-40% սահմաններում՝ բերում է սկզբնական փուլի գործարարություն: 2007 թ-ին պոլիսիլիկոնը ունեցել է հիմնականում 50%-ից բարձր շահույթի գնանցքեր:

Լիարժեք միասնացված արտադրական գիծ կարող է փայլ շահույթների լավ կլբ, երբ հսկվում է արժեքների շղթան՝ սիլիկոնից սկսած մինչև ՖԷ մոդուլ: Եթե մեկը լավ է փրապելում ծագարժեք արտադրության և լավ ներթափանցել է շուկա, ապա սովորական են դառնում 30 մինչև 50% մակարդակի շահույթներ: Նշանակելու ապրանքի (ԱՄԳ խառնուրդով ՖԷ մոդուլների) արտադրման նոր մեկնարկի համար մեր կարծիքով շահույթի գնանցքերը սկզբնական փուլում բավականին համեստ կլինեն, քանի որ նոր ձեռնարկությունը պետք իր դիրքը հասարակ շուկայում և ներթափանցի շուկան իր նոր ապրանքով: Նամբավի ձևավորմամբ և մրցակցային գին ունեցող ՖԷ մոդուլի շուկայավարմամբ հնարավոր կլինի մեծացնել շուկայի մասնաբաժինը և շահույթի գնանցքերը:

2.4.6 Կապիտալ ներդրումներ/ Նշանակելու արտադրական հզորություններ

Ավնհայտ է, որ կապիտալ [արտադրամիջոցների] ներդրումները կախված են ծավալարդյունքից, ամփոփ լուծման ընտրությունից, ենթակառուցվածքից, ևն, ինչպես նաև արտադրության վայրում՝ ընթացիկ շահագործման ծախսերից, փեխնոլոգիայի և

արքայադրության մեջ գոյություն ունեցող փորձից, աշխատութի հմտության մակարդակից, հումք նյութերի որակը հսկելու կարողությունից և մյուս գործոններից:

Ներքևյալ երկու սցենարներով (պլան A և B) մենք գնահատում ենք կապիտալ ծախսերը (սարքավորումներ, ենթակառուցվածք և շինություններ) և ընթացիկ ծախսերը Նայասարանում միասնացված մի օբյեկտի համար, որի շահագործումը պետք է սկսվի 2012թ: Խնդրում ենք հաշվի առնել, որ ներկայացված թվերը ցուցադրական են (տես. “Study by GP Solar”, 2008թ) և պետք է ստուգվեն այն փաստացի գնանշումներով, որոնք կստացվեն ամփոփ լուծման սարքավորումներ մատակարարողներից:

Պլան	Գործարարական ռազմավարություն	ԶՄԳ Si-ի նշանակեք արքայադրողականություն (տոննաներ)	Կապ. Ծախս (միլիոն Եվրո)	ՇևՍ ³ (միլիոն Եվրո/ տարի)	Չուրով և նրբաթիթեղների նշանակեք արքայադրողականություն (մՎտ)	Կապ. Ծախս (միլիոն Եվրո)	ՇևՍ (միլիոն Եվրո/ տարի)
A	Ծախսային առաջնություն	6,250	600	35	1,100	420	47
B	Կենտրոնացման ռազմավարություն	2,500	240	15	430	170	20
Պլան	Գործարարական ռազմավարություն	Փոփոխված նշանակեք արքայադրողականություն (մՎտ)	Կապ. Ծախս (միլիոն Եվրո)	ՇևՍ (միլիոն Եվրո/ տարի)	Մոդուլի նշանակեք արքայադրողականություն (մՎտ)	ՇևՍ (միլիոն Եվրո/ տարի)	ՇևՍ (միլիոն Եվրո/ տարի)
A	Ծախսային առաջնություն	1,050	300	30	1,000	200	28
B	Կենտրոնացման ռազմավարություն	420	120	13	400	80	12

Ըստ գնահատման՝ լիարժեք միասնացված արքայադրական օբյեկտ (ԶՄԳ ապրանքներ) պետք է 2011 թ-ին արժենա (համաձայն թողարկված պատվերի)։

Պլան	Գործարարական ռազմավարություն	Նշանակեք արքայադրողականություն (մՎտ)	Կապ.ծախս (մլն Եվրո)	ՇևՍ (մլն Եվրո/ տարի)
A	Ծախսային	1,000	1,520	140

3 O & M = P & E - P³N³-áńńáđŮ " èá³è³ńńáđŮ

	առաջնություն			
B	Կենտրոնացման ռազմավարություն	400	610	60

Նաջորդ աղյուսակը, որ արդեն ներկայացվել է 2-րդ Փուլի հաշվեարվությունում, մի փոքր վերանայվել է նշված կապիտալ ծախսերն արտացոլելու համար:

Նոդված	Կիլոգրամի գին (եվրո)
Քվարցային ավազ	0.50 - 0.80
ՄԳ-Si	1.00 - 1.50
ԶՄԳ-Si (հենանիշային գին)	10.00 - 15.00
Արտադրության հենանիշային գին (գնահատականներ՝ 2012 թ-ից ի վեր)	Մք-ի գին (եվրո)
ԶՄԳ	0.23 - 0.28
Զուլուկներ	0.10 - 0.12
Նրբաթիթեղներ	0.12 - 0.14
Ֆոսֆոլեմենս	0.31 - 0.36
Մողուլ	0.25 - 0.30

2.4.7 Չափանիշեր/ Արգելքներ

Նախորդ հաշվարկություններում մենք արդեն ներկայացրել ենք մանրամասնությամբ՝ հնարավոր փեխնիկական և ոչ փեխնիկական բնույթի արգելքները: Այսուհետ ամփոփում ենք պրոցեսի փարբեր առանձնահատկությունները և դրանց հետ կապակցված պահանջները, որոնք կարող են արգելքի վերածվել.

Պրոցեսի առանձնահատկություն	Սիլիկոնից մինչ- նրբաթիթեղ	Նրբաթիթեղից մինչ- ֆոսֆոլեմենս	Ֆոսֆոլեմենսից մինչ- մողուլ
Արտադրության ընդհանուր փեխնոլոգիական մակարդակ	միջինից՝ բարձր	բարձր	ցածր
Պրոցեսի ավտոմատացման մակարդակ	բարձր / միջինից՝ բարձր	միջինից՝ բարձր	ցածր
Նափուկ աշխատուժի ներգրավում	միջինից՝ բարձր	բարձր	ձածր
Զեռքի աշխատանքի ներգրավում	ցածր	միջին	բարձր

Զգայունակություն Էներգիայի արժեքի նկատմամբ	բարձր	միջին	միջինից՝ ցածր
Կապիտալ ծախսեր	բարձր	բարձր	միջինից՝ ցածր

Այժմ մի քանի կարևոր չափանիշներ, որոնք կրկին կարող են արգելքներ ստեղծել և պետք է դիտարկվեն պլանավորման փուլում.

Միլիկոնից նրբաթիթեղ	Նրբաթիթեղից ֆոտոէլեմենտ	Ֆոտոէլեմենտից մոդուլ
Մասնագետ փոխնիկական և ինժեներական աշխատակազմի առկայություն	Տեղական փոխնիկական և ինժեներական կազմի փոխտնօրգիական մակարդակ	Էժան աշխատուժի առկայություն
Էներգիայի արժեք	Էներգիայի արժեք	Շուկայի մոնիթինգ
Խրախուսումներ	Խրախուսումներ	Տրանսպորտային ենթակառուցվածք
Տեխնիկական ենթակառուցվածքի որակ և հուսալիություն	Բնապահպանական նորմարիվներ փոխյալ վայրում	Օժանդակ արդյունաբերության մոնիթինգ (ապակի, ալյումին, ԷՎԱ)
Օժանդակ արդյունաբերության և հումք նյութի մոնիթինգ	Օժանդակ արդյունաբերության մոնիթինգ	
	Տեղական գիտահետազոտական և նախագծային ոլորտին սատարող՝ գիտական և համալսարանական նպատակային ծրագիր	

Տեղամասի ընտրությունը, ուստի և Նայասարանում ՖԷ տեղական արտադրություն հիմնադրելու որոշումը պետք է ճիշտ հավասարակշռություն գտնի՝ ծախսերի, կադրային պաշարների առկայության և փոխնիկական ենթակառուցվածքի հուսալիության միջև:

Նայասարանն առաջարկում է բարենպաստ արտադրական միջավայր և կարող է հեշտությամբ բավարարել վերևում նշված պահանջներից մի քանիսին. միաժամանակ, ամենամեծ խնդիրն են

հանդիսանալու կապիտալ ծախսերը, որոնք միասնացված գիգավապոսային գործարանի դեպքում կարող են հեշտությամբ գերազանցել 1 միլիարդ եվրո գումարը՝ համաձայն գլոխ 2.4.6-ի: Նայասարանի կառավարությունից սուբսիդիաներ, խրախուսումներ (օրինակ, հարկազերծ ժամանակաշրջան) և փոխառություններ կարևորագույն դեր են խաղալու՝ տեղական ՖԷ արտադրություն հիմնադրելու վերաբերյալ որոշման գործընթացում:

2.4.8 Ժամանակագրական շրջանակներ

Թեև սպորն ներկայացված ժամանակացույցը միայն ցուցական է, բայց մինևույն ժամանակ քաղաք է շուկա ներթափանցման լավ և իրարեսական հեռանկար:

2009-2010թթ Արդյունքների քննարկում, SWOT վերլուծություն, բանակցություններ Նայասարանի կառավարության հետ՝ արտադրության խրախուսման և վարկերի մասին, տեղամասի դիրքի գնահատում, բիզնես պլանի մշակում, ֆինանսական միջոցների մարզելիություն, պարզաձև սրուգման վերլուծություն և այլն.

2010-2011թթ Որոշման գործընթաց, մրցույթ և բանակցում՝ ամփոփ սարքավորում մատակարարի հետ և շինարարության մեկնարկ

2012թ Սարքավորումների առաքում, գործարկում, ուսուցում և արագ աճ

Արտադրական օբյեկտի չափը մեծ ազդեցություն ունի ժամանակագրական շրջանակների վրա, օրինակ՝ գիգավապոսային (1,000 մՎտ) արտադրության համար մեր հաշվարկով կպահանջվի մոտ 3 փարի՝ որոշում ընդունելուց և արտադրության մեկնարկից անց, իսկ 200 – 500 մՎտ օբյեկտի դեպքում՝ այն կարող է լինել 1-ից 2 փարի՝ արժեքների շղթայի գործարարությունից և տեղական հնարավորությունների և փորձից կախված: Սկզբնական փուլի գործարարություն (օրինակ՝ արևային ֆոտոէլեմենտներ) պահանջում է լավ պատրաստված աշխատուժ՝ բարձրորակ ապրանքներ շահագործելու և արտադրելու համար, մաքուր սենյակներ և գործարանի համար բավականաչափ փարածք: Միասնացված գիգավապոսային գործարանի համար՝ ձուլուկից մինչև արևային մոդուլի արտադրություն՝ պահանջվում է առնվազն 60-80 հեկտար հողապարածք:

Կարծում ենք, որ լիովին աշխատունակ՝ միասնացված գիգավապոսային արտադրական օբյեկտ կորող է շահագործման համար պատրաստ լինել ամենաշուրջ 2012 թ-ին, այն պայմանով, որ ֆինանսական միջոցների առկայության և որոշում կայացնելու այլ գործընթացների հետ կապված ժամանակի որևէ կորուստ չի լինելու:

2.4.9 Եզրակացություն

Կարևոր է գիտակցել, որ շուկա ներթափանցելու ներուժը պայմանավորված կլինի նաև նրանով, թե արդյոք վաճառքն իրականացվում է հին սպառողներին կամ՝ նոր պատվիրատուներին և որքանով են պատվիրատուները տեղյակ սպրանքի որակի, գնորոշման, մրցակցության, արդյունաբերության աճի մակարդակի և ծագող տեխնոլոգիաների մասին: Շուկա ներթափանցելու հաջողությունը կախված է մրցունակ գնորոշումից, որակից, երկարակեցությունից, հուսալիությունից, արագ առաքումից, օգտագործողների համար լրացուցիչ օգուտներից, արգելքներ վերացնելուց և ընկերության վարահեղիությունից:

Մենք քննարկեցինք շուկայական ռազմավարության մի քանի սցենարներ և ամփոփում ենք նրանք հետևյալ կերպ:

Պլան	Ննարավոր ընկերություն (SWOT)	Գործարարական ռազմավարություն	Բաշխում	Նշանակեք արտադրողականություն (մՎր)	Ժամանակաշրջան
A	<ul style="list-style-type: none"> - ֆինանսապես շարք հզոր - երկարաժամկետ հեռանկար - դառնում է ՆՄԿԱ 	Ծախսային առաջնություն	Մանրածախ վաճառք (լրիվ հսկողություն), Ինտերնետ	~1,000	2012թ մինչև 2013թ
B	<ul style="list-style-type: none"> - կենտրոնացված արտադրություն - սահմանափակ ֆինանսավորում - շուկայի լավ “նոու-հաու” 	Կենտրոնացման ռազմավարություն	Մեծածախ վաճառք, Ինտերնետ	300-500	2011թ մինչև 2012թ.

Ձեռնարկության հզորության անաչառ գնահատումը շուկա ներթափանցման ռազմավարության մշակման կարևորագույն գործոնն է: Այսպես պետք է հաշվի առնել հետևյալ գործոններ.

- Ցածրարժեք արտադրությունում առաջատար լինելու ձեռնարկության ունակությունը, ի նկատի ունենալով ծախսերի վերահսկման ենթակառուցվածքը, նյութերի արժեքը, ծավալարդյունքը, կառավարման հմտությունները, հմուտ աշխատակազմի առկայությունը, գիտահերագրական և նախագծային բազայի մատչելիությունը և արտադրական պաշարների համարեղելիությունը՝ սպրանքի նկատմամբ կիրառվող պահանջների հետ:
- կառավարիչների խմբի իրազեկությունը և ձեռնարկության համբավը,

- Ձեռնարկության ենթակառուցվածքի համապարասխանությունը՝ կազմակերպչական, աշխատակազմի համալրման, աշխատակիցների համար օգուտների առկա ծրագրերի, սպառողների աջակցման միջոցների և նյութատեխնիկական հնարավորությունների տեսանկյունից:
- Ձեռնարկության ազատություն՝ առանց արտաքին ազդեցության գործոնների անտեղի ճնշման՝ կարևոր գործարարական որոշումներ ընդունելու:

Ինչպես արդեն բացատրվել է ավելի վաղ, Նայաստանն առաջարկում է ՖԷ ապրանքների արտադրման համար գերազանց տեղադիրք: Պատճառներ են. քաղաքականորեն կայուն երկիր, ծագող տնտեսություն, հումքի գերազանց մատչելիություն (բարձրորակ ավազ ու նաև քվարց), աշխատուժի ցածր ծախսեր, էլեկտրականության ցածր արժեք, ցածր գներով ընդարձակ հողատարածքներ և մնացած այլ աջակցող գործոններ:

Այնուամենայնիվ, հարկավոր է նաև գիտակցել թերությունները, այդ թվում. դեպի ծով ելքի բացակայություն և բարդ մուտք դեպի հիմնական շուկաներ: Ծովային նավահանգիստ չկա, իսկ երկաթուղային տրանսպորտը հիմնականում թերզարգացած է և պետք է հարի Իրանի, Վրաստանի, Ադրբեջանի կամ Թուրքիայի տարածքները, ինչը կատարյալ իրավիճակ չի ստեղծում:

Մեր կարծիքով, տեղական արտադրության համար շար կարևոր են Նայաստանի կառավարության կողմից գրավիչ սուբսիդիաներ, խրախուսումներ (օրինակ, հարկազերց ժամանակահատված) և փոխառություններ: Եթե թերությունները (գլխավորապես նյութատեխնիկական հիմքը) հաջողվի հավասարակշռել գրավիչ հարկազերց ժամանաշրջաններով և այլ խրախուսիչ միջոցառումներով (դրամաշնորհներ վերապարաստման համար, հողի անվճար հատկացում և այլն), ապա որշման գործընթացը կարող է ավելի պարզ դառնալ:

Բայց և այնպես պետք է ընդգծենք այն փաստը, որ ընդհանուր առմամբ նոր արտադրական նախագծերի կամ ընդլայնումների տեղադիրքը կլինի կարևորագույն շուկաներին՝ Գերմանիային և ԱՄՆ-ին համեմատաբար մոտ՝ ինչն այդ երկրների կառավարությունների վարած տնտեսության կհաղորդի մեծ արագացում: ԱՄՆ-ում և Գերմանիայում նոր ներդրումները ղեկավարվում են հզոր տեղական պահանջարկով, տեղական արտադրության ապրանքներին տրվող առաջնությամբ և շուկային ավելի մոտիկ մոդուլներ հավաքելու շնորհիվ՝ նյութական ծախսերի նվազեցման անհրաժեշտությամբ: Քանի որ մոդուլների արժեքը հաջորդ հինգ տարվա մեջ անկում է ապրելու, վերջնական ապրանքի համար տրանսպորտային ծախսն ավելի ու ավելի կթանկանա, հակազդելով օտարերկրյա արտադրական օբյեկտներում՝ աշխատուժի ցածր գնի և գրավիչ խրախուսումների հետ:

Դա հավրկապես վերաբերում է նրբաթաղանթային ապրանքներին, ուր արտադրական ծախսն արդեն հասել է 0.80 եվրո/Wp մակարդակի և կարող է լրացուցիչ կրճատվել՝ լրիվ ավարտնարացված արտադրական պրոցեսների և արդյունավետության բարձրացման շնորհիվ: ՖԷ մոդուլներ մեծածավալ իրեր են և պահանջում են զգույշ վերաբերմունք և հատուկ փաթեթավորում: Նաջորդ փարինների ընթացքում կարևոր գործոնն են դառնալու նյութատեխնիկական ապահովման ծախսերը, ուստի նրանք պետք է նվազեցվեն այն աստիճանով, որը թույլ է տալիս պահել կենսունակ դիրքը շուկայում: Բյուրեղային սիլիկոնի մոդուլների գնի շարունակվող նվազմանը գուզընթաց՝ օրինակ ԶՄԳ նույթից պատրաստված արևային ֆոտոէլեմենտների դեպքում՝ նյութատեխնիկական ապահովման ծախսերը նույնպես հարկավոր է օպտիմալ դարձնել, կազմակերպելով արտադրությունը տեղադրման վայրին ավելի մոտ տեղում:

Ներևաբար, Նայաստանում տեղական արտադրություն հիմնադրել շահագրգռված հնարավոր ցանկացած կողմին խորհուրդ է տրվում քննարկել արտադրության սահմանավակումը արևային ֆոտոէլեմենտներով՝ սկսելով Նայաստանում առկա հումքից, այնուհետև փոխադրել արևային ֆոտոէլեմենտները և հավաքել ՖԷ մոդուլները Նայաստանից դուրս գտնվող նշանակելա շուկաներում:

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

3.1 Միջազգային փորձի գնահատում՝ ՖԷ արդյունաբերության – շուկայի զարգացման խթանման նպատակով

Ներածություն

Ավելի քան 50 տարի շարունակ ֆոտոէլեկտրական սարքեր գտնում են բազմաթիվ կիրառումներ: Տեխնոլոգիայի արդյունավետության բարելավման և գնի նվազեցման հետևում է նոր կիրառումների երևան գալը: 1980-ական թվականների վաղ շրջանում շուկայում արագ աճ են ապրել սպառողական ապրանքները (օրինակ՝ հաշվասարքերը), սակայն այժմ նրանք ներկայացնում են համընդհանուր շուկայի պակաս քան 1% մասնաբաժինը: 1980-ականների կեսերից մինչև 1998թ՝ արտահամակարգային կիրառումներ գերիշխող դիրք են գրավել ՖԷ կիրառումների համընդհանուր շուկայում: 1990-ականների կեսերից մինչև այսօր էական աճ են ապրել ընդհանուր համակարգին միացվող ՖԷ սարքերը, որոնք ներկայումս ներկայացնում են տարեկան տեղադրված ՖԷ-ի 90%-ը: Սպասվում է, որ այդ շուկան շարունակելու է իր աճը նույնչափ բացառիկ տեմպերով գալիք մի քանի տարի շարունակ: Առ այսօր աշխարհում ընդհանուր էներգահամակարգին միացված ՖԷ-ի կուտակային քանակության վերաբերյալ


հրապարակված փվյալները ցույց են տալիս, որ փարեկան աճի մակարդակը (փարեցփարի) վերջին 8 փարվա ընթացքում գերազանցել է 50%-ից, համակարգին միացած ՖԷ-ն դարձնելով վերականգնվող էներգիայի աշխարհում ամենարագ աճող շուկա:

Այսօր համակարգին միացած ՖԷ-ն ապահովում է աշխարհի էներգիայի փոքր մասնաբաժինը, սակայն ակնկալվում է, որ ոչ այնքան հեռու ապագայում այն կապահովի էներգիայի շուկայի մեծագույն մասը՝ ի համեմատ քոլոր մյուս առկա պաշարների: Նենց այդ պատճառով «Վերականգնվող էներգետիկայի և էներգետիկական արդյունավետության» ցանկացած պլանի վերամշակման մեջ ընդհանուր էներգահամակարգին միացած ՖԷ-ն պետք է կարևորագույն դեռ խաղա:

Ընդհանուր էներգահամակարգին միացած ՖԷ-ի դիփոլոգ ֆանտաստիկ աճը պարզ ցուցադրում է հսկա գործարարական հնարավորությունները, որոնք բացվում են նրանց համար, ով ցանկանում է ներդրում կատարել այդ շուկայի մեջ: Այնուհանդերձ հարկավոր է նաև գնահատել, թե որոնք են լինելու հիմնական շարժիչ ուժերը մինչև հասարակի հավասարակշռություն ավանդական էլեկտրականություն արտադրողների հետ: Բացի այդ, չնայած որ «վառելիքը» (արևի լույս) ընդհանուր էներգահամակարգին միացած ՖԷ-ի համար անվճար է, փեխնոլոգիական կապիտալ ծախսերը դեռևս արագացվում են էլեկտրականության արտադրության ավելի բարձր գներում, քան ավանդական արտադրության գները (դիփոլոգություն. ավանդական գների մեջ չեն ներառվում արտաքին ազդակների հետ կապված ծախսերը): Նեոպրես երկրներ արդեն մշակում են այդ գնային փարբերությունը մի շարք աջակցման մեխանիզմների միջոցով՝ նպատակ ունենալով արդար ու հարթ խաղի դաշտ պատրաստել մինչև այն պահ, երբ ՖԷ փեխնոլոգիան զարգանա և մտքենա ավանդական էներգահամակարգի գնորոշման:

Շուկայի զարգացում


Տարեկան փեղադրված ՖԷ շուկայի փարածաշրջանային բաշխումը 2008 թ-ին (հաշվարկային, փես. «Envision») ներկայացվում է նկար 12-ում:



Նկար 12. Տարածաշրջանի շուկայի զարգացում 2008 թ (հաշվարկային)

Ներքին փողոցային մեծ մասնաբաժին ունեն Գերմանիայում՝ ~44%, որին հաջորդում է Իսպանիան (~24%), ԱՄՆ (~10%) և Ճապոնիան (~6%): Այդ շուկաները մեծանում են շնորհիվ թե՛ անցյալ և թե՛ նոր ներդրումների, որոնք արվել են ՖԷ փոխնորոգիչի մշակման և իրականացման մեջ համաձայն կանխամրաված և հետևողական քաղաքական մոտեցման: Փաստորեն, 2008թ ՖԷ-ի փողոցային ընդհանուր փարեկան գնահատված ծավալից (~4.1 GWp) համարյա 90%-ը կախված է քաղաքական բարի կամքից: Այդ ամենը բխում է հեռափոխական մրավելակերպով օժտված քաղաքական գործիչների ջանքերից, որոնց հաղթեցին և կարողացան իրականացնել ՖԷ փոխնորոգիչի շուկայի զարգացման կայուն քաղաքականություն:

Նկար 13-ը փայլա է շուկայի բաշխման պատկեր և ընդգծում է, որ ընդհանուր համակարգին միացված շուկայի 100% կախված է աջակցող միջավայրից՝ որը պետք է գործի շուկան զարգացնելու նպատակով մինչև ընդհանուր էներգահամակարգի հետ պարհիպերի հաստատում: Արտահամակարգային շուկայի հաշվին է ընկնում շուրջ 9%-ը և այն արագ է զարգանում շուկայի իրական պայմանների (արտահամակարգային ՖԷ-ն կարող է գործել բազմաթիվ հեռու կիրառումներում) ու նաև դոնոր ծրագրերի հիման վրա: Սպառողական շուկան՝ ՖԷ-ի ամենահին շուկան է և հիմնվում է գույք շուկայի խաղի վրա:



Նկար 13. Կիրառումների զարգացման նկարագիր 2008թ համար (հաշվարկային, տես. "Envision")

Շուկայի շարժիչ ուժեր՝ օրենսդրական – կանոնակարգող միջոցառումներ

Այսուհետ մենք ավելի ուշադիր կուսումնասիրենք էներգահամակարգին միացած ՖԷ կիրառումների շուկայի գլխավոր շարժիչ ուժերը և կներկայացնենք այն միջոցառումները, որոնք գործում են Եվրոպական Միությունում, ԱՄՆ-ում, Հարավարևմտյան և Կենտրոնական Ասիայում, Ռուսաստանում և Ասիայի այլ գլխավոր շուկաներում: Ներկայումս կարող ենք դասակարգել աշխարհում ներմուծված ՖԷ ծրագրերը ըստ վեց հիմնական քաղաքականությունների: Այդուսակը ստորև փայլիս է ներկայումս իրականացվող հիմնական քաղաքականությունների նկարագիրը:

Քաղաքականություն	Նկարագրություն
Խթանող /"Ֆիդ-ին"/ սակագներ	Նավելագին՝ ընդհանուր էներգահամակարգին միացած ՖԷ էլեկտրականության համար, որը վճարվում է համակարգերի տերերին՝ համայնքային կամ կանոնակարգող մարմնի կողմից Գինը սովորաբար երաշխավորվում է 20 փարվա համար:
Հարկային խրախուսումներ	ՖԷ համակարգերի ձեռքբերման ժամանակ վճարվող հարկի կրճատում կամ նրանից ազատում, ՖԷ համակարգի որոշ քաղաքականափ ընդհանուր գնի պահումը՝ գործարարական կամ անձնական հարկից
Վերականգնվող	Ընդհանուր էներգահամակարգին միացած ՖԷ էլեկտրականության

փաթեթի սրանդարդ (RPS)	պարպադիր մաս՝ րվյալ էներգահամակարգի համընդհանուր էներգաարտադրության խառնուրդում: ՖԷ համակարգերով արտադրած էլեկտրաէներգիան ներկայացնում են առևտրում փոխանակելի հավասարագրեր:
Զուր չափում	էներգահամակարգին միացած ՖԷ-ով արտադրված էլեկտրականություն օգտագործվում է այն փանր կամ շենքում, ուր այն փրկադրված է: Այդ շենքում սպառվածից դուրս ցանկացած քանակություն արտահանվում է էներգահամակարգի մեջ: Շենքում սպառվածից ցանկացած պակաս քանակություն կարող է ներմուծվել էներգահամակարգից:
Ուղղակի կապիտալ ծախսեր	Կանխիկ գումարի վերադարձ՝ էներգահամակարգին միացած ՖԷ համակարգերի ծախսերի մասնաբաժնով:
“Կանաչ” գնորոշում	Կամավոր սխեմաներ, ուր էլեկտրականության սպառողները վճարում են հավելավճար՝ համայնքային ծառայությունից կամ էլեկտրականության մանրածախ այլ վաճառողից սրացված՝ էներգահամակարգին միացած ՖԷ էլեկտրականության դիմաց: Էլեկտրաէներգիան գնվում է էներգահամակարգին միացած ՖԷ համակարգերի փրկերից:

Աղյուսակ. Էներգահամակարգին միացած ՖԷ-ի աջակցման հիմնական քաղաքականություն

Խթանող, “Փիդ-ին” սակագին (FiT) իրենից ներկայացնում է 2000 թ-ից ի վեր ՖԷ-ի համաշխարհային շուկայի աճը ղեկավարող հիմնական քաղաքականություն: 2008 թ-ին փարեկան փրկադրված ընդհանուր ՖԷ հզորությունների մոտավորապես 80%-ը գրավել են միմիայն FiT-ի շուկաներում: FiT-ը խրախուսում է էներգահամակարգին միացած ՖԷ-ի կիրառումը, արտոնյալ մակարդակներով վճարելով արտադրած էլեկտրականության դիմաց: Արտադրած էլեկտրականության համար վճարվող սակագնի մակարդակը սովորաբար սահմանվում է այն մակարդակներով, որոնք պետք է ապահովեն փոխնորդիայի իրականացման և պահպանման մեջ արված ներդրումների համապատասխան հարուցում՝ համապատասխան ժամկետում, սովորաբար՝ 20 փարվա կարգի: Երկարափուլ ժամանակաշրջանում գինը անփոփոխ դարձնելու հիմնավորումը արտացոլում է այն փաստը, որ նման փոխնորդիայի հիմնադրման հետ կապված գլխավոր ծախսերը ընկնում են սկզբնական կապիտալ ծախսերի մեջ: Սակագները սովորաբար փարբերակվում են ըստ արտադրողականության, երբեմն՝ ըստ հարուկ կիրառումների: Արտոնյալ գներ սովորաբար վճարվում են մի հիմնադրամի միջոցով, որը ձևավորվել է էլեկտրականության

ամբողջ սպառողական դաշտում՝ էլեկտրականության գնին գումարած փոքր սակագնից: FiT քաղաքականություններ կարելի է համադրել աջակցման այլ կառույցների հետ, սակայն հաճախ միակ լրացուցիչ աջակցման քաղաքականություն, որ պահանջվում է հաջողության հասնելու համար, դա՝ ցածր փոխադրույթով փոխառությունների փրամադրում է, որն օգնում է պակասեցնել սկզբնական մեծ ծախսերի բեռը: Սկրնական փուլում՝ նման փոխառությունների նկատմամբ ֆինանսական կազմակերպությունների շահագրգռվածությունը հավաքագրելու ժամանակ՝ կարող են լինել դժվարություններ, սակայն հավանական է, որ փոխառուների նկատմամբ հեղափոխության աճին զուգահեռ նրանց թիվը կշարանա և նրանք կառաջարկեն փաթեթներ նման կիրառումների համար:

FiT-ը ամենահաջողակ ՖԷ քաղաքականությունն է և ապացուցել է, որ կարող է ապահովել մեծագույն օգուտներ, սրելով ավելի մեծ թվով աշխատատեղեր քան ցանկացած այլ քաղաքականություն, լավագույն գործիք է CO₂-ի էմիսիաների նվազեցման համար և հաջողությամբ իրագործվում է աշխարհի ավելի քան 50 երկրներում: Ինչն է դարձնում FiT-ը հաջողակ: Պետք է ուշադրություն դարձնել երկարաժամկետ երաշխավորված վճարումների վրա, որոնք պարզաճ կերպով արտացոլում են արտադրության ծախսերը և շահույթը: Բացի այդ խրախուսման մակարդակները պետք է պակասեն ժամանակի ընթացքում, այսինքն՝ նոր համակարգերի փորձարկման համար փողի է ունենում “սակագնի աճողական անկում”, բայց այն մնում է անփոփոխ փայլ համակարգի ծառայության ժամկետի սահմաններում: Այնուհանդերձ, յուրաքանչյուր երկիր պետք է գտնի FiT-ի մակարդակի և ֆինանսավորման մեխանիզմի սեփական լուծումը: Նպատակն է՝ կայուն զարգացման բարձր մակարդակ նվաճելով, հրել ծավալարդյունք ՖԷ արդյունաբերության մեջ, որը օգուտ է բերում գլխավորապես փողական արդյունաբերությանը, և նվազագույնին հասցնել հարկատուների ծախսերը: Եթե ՖԷ-ի արժեքը դառնում է դժվարակիր, դա կարող է շար արագ հեղափոխում պայմանավորել և սպանել ցանկացած շուկա:

Նարկային խրախուսումներ կարող են հայտնվել մոտեցումների լայն ընդգրկույթով, ներառելով նաև անհատական կամ գործարարական հարկադրույթների կառուցվածքի մշակում: Նամակարգերի փերերին նման քաղաքականությունները սովորաբար թույլ են տալիս կրճատել այն հարկը, որը նրանք պարտավոր են վճարել, ուստի դա չի պահանջում կառավարությունից կամ կանոնակարգող մարմնից գումարներ ուղղակիորեն փրամադրել համակարգի փերերին: Դրա փոխարեն պակասեցվում է այն գույք հարկային հարույցը, որը նրանք ստանում են համակարգերի փերերից: Նարկային խրախուսումներ կարելի է փրամադրել դաշնային, նահանգային/գավառային կամ համայնքային իշխանությունների մակարդակով: Նախապես հարկային խրախուսումների օրինակների թվում ներառված են.

- համակարգի արժեքի արագացված արժենվագում՝ գործարարությունների համար,
- հարկազերց ժամանակաշրջաններ՝ անորոշ կամ որոշակի ժամանակահատվածում՝ ԿԵԿ-ի արժեքի համակարգերի գոյացում եկամտից,
- մանրաձևի վաճառքի հարկից ազատում որակավորվող սարքավորումների համար և
- գույքահարկից ազատում՝ այն հավելյալ արժեքի մասով, որն ընդհանուր էներգահամակարգին միացած ՖԷ համակարգը գումարում է փան արժեքին:

Սովորաբար նման մոտեցումներ կիրառվում են աջակցման այլ մեխանիզմների հետ համադրությամբ, քանի որ ինքնըստինքյան չեն ապահովում բավականաչափ ֆինանսական խրախուսում՝ համակարգերի հիմնադրումը խթանելու համար: Այսպես կարևոր է երաշխավորել, որ գոյություն ունեցող հարկային առավելությունները հաշվառված են աջակցման համընդհանուր ընդհանուր սխեմայում: Դրա շնորհիվ կարելի է խուսափել չափազանց բարձր մակարդակով փոխադրվող աջակցումից, որի արդյունքում շուկան գերաբաբանալու է:

Վերականգնվող փաթեթի սրանդարտներ (RPS)՝ դրանք կառավարությունների կամ՝ կանոնակորգող իշխանությունների հրահանգներ են, որոնք պարտադրում են առաքվող էլեկտրաէներգիայի որոշակի բաժին սրանալ վերականգնվող էներգիայի (ՎԷ) աղբյուրներից: Ընդհանուր առմամբ հենց էլեկտրական ցանցի փոխում է պարտախանարու լինում այդ նշանակելիքին բավարարելու համար՝ ինչը նա անում է, գնելով ՎԷ-ից արտադրված էլեկտրականության նվազագույն մասնաբաժին: RPS-ը սովորաբար իր մեջ ներառում է համապարասխանության հաստատման որոշակի ձև՝ օրինակ վերականգնվող էներգիայի աղբյուրից արտադրված էլեկտրականության “առկարում փոխանակելի հավասարագրեր”, որոնց անվանում են “Վերականգնվող էներգիայի հավասարագրեր” (REC): Այդպիսի հավասարագրեր հաճախ ներկայացնում են կՎԿ.ժամերի մի թիվ (սովորաբար՝ 1,000 կՎԿ.ժ. կամ մՎԿ.ժ.): Նավասարագրերը դառնում են առկարի /փոխանակման/ առարկա՝ վերականգնվող էներգիա արտադրողի և այն միավորի միջև, որը պարտավոր է կատարել պարտավորությունը, իսկ դրանից հետո՝ համապարասխանեցման ժամանակամիջոցի ավարտին՝ պետք է փոխանցվեն RPS-ի իշխանության: REC-ի թիվը պետք է լինի ՎԷ-ի համապարասխանության բաժնեչափին համարժեք, ընդ որում ցանկացած պակասորդ հանգելու է փուզանքի վճարման, երբ փուզանքի վճարը ընդհանրապես նախատեսված է լինել ավելի մեծ, քան փոխանակվող հավասարագրերի ակնկալվող շուկայական գինը: Իրենց պարագայում ձևով, RPS սրանդարտներ ստարում են ամենաէժեկտիվ ՎԷ աղբյուրներին՝ օրինակ՝ մրցույթային գործընթացի միջոցով: Տիրոջ էլեկտրաէներգիան, հողմային և կենսազանգվածային էներգիայի աղբյուրներն ավելի հասունացած են, ուստի համապարասխան REC-ներ կարելի է առաջարկել պակաս գնով, քան

Լներգահամակարգին միացած ՖԷ-ի REC-ի դեպքում: Այնուամենայնիվ, որոշ RPS սպանդարտներ բաժանել են փաթեթը ըստ փարբեր տեխնոլոգիական հարկերի /յարուսների/, կամ՝ տեխնոլոգիային հատուկ բաժնեջատերի, այնպես որ մրցակցությունը ընթանում է ավելի շուրջ հատուկ տեխնոլոգիաների, քան փարբեր տեխնոլոգիաների միջև: Երբ գումարված է Լներգահամակարգին միացած ՖԷ-ի հավելումը, փոխանակվող հավասարագրերին սովորաբար անվանում են “Արևային վերականգնվող Լներգիայի հավասարագրեր” կամ SREC-կեր: Առանց նման տեխնոլոգիական հարկերի RPS սպանդարտներ չեն աջակցի Լներգահամակարգին միացած ՖԷ-ին:

Զուր չափում՝ դա Լներգացանցի փոխկապակցման և հաշվառման մոտեցումն է, որը կարելի է օգտագործել Լներգահամակարգին միացած ՖԷ համակարգերի դեպքում: Կանոնակարգող մարմնի կողմից հաստատված սարքավորումներ օգտագործելու պարագայում, էլեկտրականությունը արտադրվում է նույն այն կողմի վրա, ինչը է սպառողի բեռնվածությունը՝ այլ կերպ ասած, էլեկտրաԼներգիայի համայնքային ծառայության եկամուտների չափման սպառողական կողմում: Այն ժամանակ, երբ օգտագործվում է Լներգահամակարգին միացած և զուր չափվող ՖԷ համակարգ, հնարավոր են արտադրվող էլեկտրաԼներգիայի օգտագործման հետևյալ սցենարներ, կապված փվյալ փան կամ շենքի համար պահանջվող էլեկտրականության ընդհանուր քանակությունից.

- Արտադրվող ՖԷ էլեկտրականությունը պահանջվող ծավալից պակաս է: Տարբերությունը լրացնելու համար գնվում է համայնքային ծառայության կողմից արտադրված էլեկտրականություն:
- Արտադրվող ՖԷ էլեկտրականության ծավալն ավելի մեծ է քան պահանջվողը: ՖԷ էլեկտրականությունը փնից կամ շենքից արտահանվում է համայնքային ծառայության էլեկտրացանց: Արտահանվող էլեկտրականության ծավալը պահպանվում է որպես հաշվեգրվող ելք սպառողի օգտին՝ որը կօգտագործվի ավելի ուշ:

Նաշվեգրման ցանկացած ժամանակամիջոցում սպառողը վճարում է միայն սպառված էլեկտրաԼներգիայի զուր քանակության համար և երբեմն թույլտվություն է ստանում փոխանցել արտադրված էլեկտրականության ծավալ՝ մեկ հաշվեգրման ժամանակահատվածից դեպի մյուսը: Զուր չափումը թույլ է տալիս սպառողներին ստանալ մանրածախ վաճառքի գներ սեփական արտադրության համար:

Կապիտալ միջոցներով ուղղակի աջակցման ծրագրերի նշանակետ է Լներգահամակարգին միացած ՖԷ-ի հիմնական արգելքը՝ սկզբնական մեծ արժեքը: Սարքավորումների կապիտալ ծախսերի համար ֆինանսական աջակցության շնորհիվ հնարավոր է ընդլայնել շահագրգիռ կողմերի թիվը, քանի որ նվազում են զուր արժեքը և հնարավոր ֆինանսավորման պահանջները,

տեղավորելով ծախսերը նրանց վճարելու պարտաստականության կամ/և կարողության սահմաններում: Արդյունավետ լինելու համար դրամաշնորհներ պետք է լինեն համապատասխան չափի, կանխապեսելի և ժամանակի կտրվածքով հերոնողական: Աջակցման նման ծրագրերի ֆինանսավորումը ընդհանուր առմամբ հայթայթվում է կառավարության բյուջեներից: Վերջնական օդակի օգտագործողներից ներդրումներ խթանելու նպատակով ուղղակի կապիտալով աջակցման ծրագրերին մեջ իրենց լուծման կարոն են ունենալ նաև համայնքային ծառայությունները: Ներդրումային որոշումներ խթանող ֆինանսական խրախուսումների հաջողությունը կախված է նաև այն բանից, թե արդյոք խրախուսման մակարդակը բավական է էներգիայի շուկայական գնի և վերանգնվող էներգիայի արժեքի միջև բացը լրացնելու համար՝ հաշվի առնելով թե՛ համակարգի կապիտալ արժեքը և թե՛ պահանջվող սպասարկումը: Ընդհանուր էներգահամակարգին միացած ՖԷ համակարգերի դեպքում այս ծրագրերը սովորաբար համադրված են լինում ֆինանսական այլ մեխանիզմների, օրինակ՝ գույք չափման կամ հարկային խրախուսումների հետ: Նարկավոր է աստիճանաբար պակասեցնել և ժամանակի ընթացքում ավարտել խրախուսումը, երաշխավորելով, որ արտադրողները և մշակողները շարունակում են բարելավել տեխնոլոգիան և նվազեցնել ծախսերը: Խրախուսման նախագծված կրճատում աստիճանաբար կնախապարտաստի շուկան այնպիսի իրավիճակին, երբ դրամաշնորհներ այլևս չեն լինելու:

Ժամանակի ընթացքում իշխանությունները պետք է վերահսկեն կապիտալ ծախսերը և խրախուսման կառուցվածքները, նպատակ ունենալով երաշխավորել, որ աջակցությունը տրամադրվում է պարզաճ ձևով՝ ոչ քաղաքականության նպատակներին չհամապատասխանող, ոչ էլ շուկան գերաբացնող մակարդակով: Դա բարդ խնդիր է լինելու, քանի որ ըստ գոյություն ունեցող միջմասն արտադրամիջոցների ծախսերը ղեկավարվում են գլոբալ շուկայի առաջարկով և պահանջարկով, իսկ մեկ երկրի տեղական շուկան ընդհանրապես բավականաչափ մեծ չէ՝ շուկայի վերափոխում և տեխնոլոգիական փոփոխություն միայնակ շարժելու համար:

“Կանաչ” Գնորոշում իր մեջ է ընդգրկում վերականգնվող էլեկտրականության մանրածախ վաճառքով սպառողներին բաշխում ավելի բարձր գնով, քան ավանդական եղանակով արտադրված էլեկտրականության դեպքում: Սովորաբար դա լինում է էլեկտրականության մանրածախ վաճառողի, էլեկտրականություն բաշխողի կամ համայնքային էլեկտրական ծառայության կողմից կամավոր նախաձեռնվող միջոց: Էլեկտրականություն առաջարկելու մրադիր կազմակերպություն կամ՝ առաջարկում է տվյալ գին վերականգնվող էներգիայի արտադրողներին կամ՝ հայտարարում է երկարաժամկետ (սովորաբար 20 տարվա) պայմանագրերի ձեռք բերման մրցութային գործընթաց: Նենց որ որոշվել է մրցութային գործընթացը կամ երկարաժամկետ պայմանագիրը, կազմակերպությունը կարող է վաճառել էլեկտրականությունը սպառողներին՝ “կՎ.տ.ժամի դիմաց” հիմունքով:

Վերականգնվող էներգիայի խառնուրդից կախված (երբեմն ավելի մաքուր էներգիայի, օրինակ՝ բնական գազով էլեկտրականության արտադրություն), մանրածախ վաճառքով բաշխում իրականացնող կամակերպությունը սահմանում է ավյալ խառնուրդի գինը: Եթե էներգահամակարգին միացած ՖԷ էլեկտրականության փոկոսը մեծ է, ապա գինը կլինի ավելի բարձր: Եթե այլ վերականգնվող աղբյուրի փոկոսն է ավելի մեծ, օրինակ՝ հողմային էլեկտրաէներգիայինը, ապա գինը կլինի ավելի ցածր: Երբեմն սպառողին առաջարկվում է մի քանի փաթեթների ընտրություն և նա կարող է ընտրել կամ՝ էլեկտրականության ավյալ քանակություն, որը ձեռք է բերելու ամսեկան, կամ՝ կարող է գնել էլեկտրականության իր ամբողջ ծավալը՝ որևէ մեկ փաթեթի հիման վրա:

Շուկայի նկարագիր

Սպորն ներկայացվում է աշխարհի փարբեր շուկաների և իրագործվող ՖԷ քաղաքականությունների նկարագիր:

Եվրոմիությունը և նրա անդամ երկրները կազմում են աշխարհի ամենամեծ շուկան և սպառում են փարբեկան փողադրված ՖԷ արտադրության 80%-ը: 2004 թ-ից սկսած, գլխավոր շուկան է հանդիսացել Գերմանիան, համաշխարհային շուկայի իր 44% մասնաբաժնով: Գերմանիան առաջին երկիրն է եղել, որը ներմուծել է գրավիչ անսահմանփակ FiT խթանող սակագին՝ ՖԷ փեխնուրդիան և համապատասխան արդյունաբերությունը խթանելու նպատակով: Տարեկան փողադրված ՖԷ հզորությունը ըստ գնահատումների 2008 թ-ին հասել է 1.8 գիգաՎՊ: Ինչպես և անցյալում ոսկու բումի ժամանակ, Իսպանիան դառել է նոր “Էլ Դորադո” անցած երկու փարվա ընթացքում: ՖԷ-ն ակտիվորեն գովազդվել է և աջակցվել է շար գրավիչ FiT սակագներով, գոյացնելով անսպասելի շահույթներ: 2008 թվականին փարբեկան փողադրված ՖԷ հզորությունը ըստ գնահատումների կազմել է 1 գիգաՎՊ, ինչը ներկայացնում է շուկայի 24% մասնաբաժինը: Թե՛ Գերմանիան և թե՛ Իսպանիան, երկուսն էլ վերանայեցին իրենց FiT սակագնային ծրագիրը և էապես պակասեցրեցին սակագինը, սահմանելով փարբեկան փողադրված ՖԷ հզորության նոր սահմաններ: Այդ հայրարարություններին հաջորդած՝ ֆինանսական սեկտորի առաջին արձագանքը բացասական է եղել, սակայն, համաշխարհային ֆինանսական ճգնաժամ ունենալով հանդերձ, կանխաբևակում է, որ մոդուլի գինը նվազելու է անգամ ավելի արագ քան վերանյված FiT սակագները, ուստի երկու շուկաներն էլ կրկին կլինեն կենսունակ ու գրավիչ: Եվրոպական Միության այլ գրավիչ և աճող շուկաներից է Իտալիան (աշխարհի թիվ 5-րդ ՖԷ-ի շուկա), Ֆրանսիան, Նոնասպանը և Պորտուգալիան: Նաշվարկների համաձայն այդ չորս շուկաները 2009թ սպառելու են 1 գիգաՎՊ-ից մի փոքր մեծ ծավալ: FiT սակագնային քաղաքականությունը գործում է նաև Եվրոպայի բազմաթիվ այլ երկրներում, այդ թվում՝ Բելգիայում, Լյուքսեմբուրգում, Շվեյցարիայում, ՄԹ-ում (քննարկման փուլում), Նիդեռլանդներում և Չեխիայի Նանրապերությունում: Դրանք բոլորն էլ առաջարկում են գրավիչ FiT սակագներ, որոնք սակայն

համաշխարհային աճի մեջ մեծ լուծա չունեն, քանի որ այդ շուկաների չափը սահմանափակ է: Եվրոպայում FiT սակագնային քաղաքականությունը ընդրվել է որպես վերականգնվող էներգիայի զարգացման կայուն մեխանիզմ, լավ ըմռնվում ու լիովին ընդունվում է (ԵՄ-ի անդամ 27 երկրներից 20-ը ներմուծել են FiT-ը):

Ամերիկայի Միացյալ Նահանգներում շուկայի աճը համարյա մտքեցել էր կտրուկ կանգառի, երբ 2008 սեպտեմբերին ԱՄՆ սենատի վերջին նիստերից մեկում քննարկվում էր չվերականգնել “Ներդրումային Նարկային Վարկերը” (հարկային խրախուսումներ որպես գլխավոր շարժիչ ուժ): Սակայն 2008թ հոկտեմբերի 3-ը մեծ օր է հանդիսացել և արևային բնագավառն ականապես դառավ 2008թ “Տնտեսական կայունացման արտակարգ ակտի” մասով՝ “Ներդրումային հարկային վարկերի” (ITC) ևս ութ փարով երկարացման: ՖԷ կայանքների 45% աճի մակարդակը ԱՄՆ-ում աշխարհի ամենբարձրերից է եղել, ինչը մասամբ պայմանավորված է եղել պետական նոր ծրագրերով (հիմնականում RPS ստանդարտներով) և ITC վարկերով, և, հաշվարկների համաձայն, արդյունքում հանգել է 2008 թ-ին տեղադրված 400 մեգաՎՊ ՖԷ հզորության: Ամենաարագ աճ են ցուցաբերել համայնքային ծառայության մասշտաբի կայանքները, որոնց հաշվին է պատկանում փարկեկան տեղադրված հզորությունների 15%-ը: ԱՄՆ-ն աշխարհի թիվ. 3-րդ ՖԷ շուկան է՝ շուրջ 1,200 մեգաՎՊ հաշվարկային կուրակային հզորությամբ, բայց կարող է հեշտությամբ առաջ անցնել նաև Գերմանիայից՝ ITC-ի ընդլայնման և փարբեր այլ աջակցող պետական ծրագրերի շնորհիվ: Ութ փարվա երկարացմանն ի լրումն արևային բնագավառի ITC վարկերով ընդգրկվեցին նաև համայնքային ծառայություններ, որոնք այժմ կարող են օգտվել ITC ուղղակի առավելությունից՝ արևային էներգիայի նախագծերի սեփականատերերի կարգավիճակով: ԱՄՆ-ում կարևոր շարժիչ ուժն է ոչ միան ITC-ին, բայց նաև պետական RPS (վերականգնվող էներգիայի ներդրումային ստանդարտների փաթեթի) ծրագիրը՝ տեխնոլոգիական փարբեր հարկաշարքերով և հատուկ տեխնոլոգիական նշանակելներով: Բացի այդ, բոլոր նահանգներում ընդունվել է գուր չափումը, իսկ մի քանիսում՝ թեն շար ավելի ցածր մակարդակներով քան Եվրոպայում՝ նույնիսկ ներմուծվել է FiT սակագինը՝ ՖԷ տեխնոլոգիայի ազգային և նահանգային աճ խթանելու նպատակով: ԱՄՆ-ի խոշորագույն շուկան է Կալիֆորնիան, որին շար է աջակցում նահանգապետ Ա. Շվարցենեգգերը, ով 2007թ հունվարին սկսել է “Գոու Սոլար Կալիֆորնիա” նախաձեռնությունը: Նոր շրջանակները ներառեցին նաև մի մեծ տեղաշարժ արևային բնագավառի խրախուսումների հաշվարկման եղանակում, շեղվելով այն համակարգից, որը ֆինանսավորում էր արևային բնագավառի խրախուսումներ միմիայն տեղեկաթերթային [անձնագրային] հզորությունից ելնելով, դեպի մեկը, որում խրախուսման մակարդակներ հիմնվում են կարարողականության գործոնների, այդ թվում՝ կայանքի անկյան, թեքվածության և տեղադիրքի վրա: Այդպիսի կարարողականության հիմքը երաշխավորում է, որ Կալիֆորնիան արտադրում է մաքուր արևային էներգիա և պարզևսարում է համակարգերին,

որոնք ի վիճակի են ապահովել առավելագույն արևային էներգիայի արտադրություն: “Կալիֆորնիա Սոլար նախաձեռնությունը” կազմում է “Գոու Սոլար Կալիֆորնիա” արշավի մի մաս և հենվում է Կալիֆորնիայի ներդրողի սեփականություն հանդիսացող համայնքային ծառայությունների փարաձքներում սպառողներին առաջարկվող՝ արևային բնագավառում 10 փարվա պերական հատուցումների հիման վրա: Եզրակացնելով կարելի է ասել, որ 2008թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներն ունեցել են շուկայի 10%-ը և առաջարկում են շուկայի շարժիչ ուժերի խառնուրդ՝ գույք չափումից սկսած, ուղղակի կապիտալ աջակցումով, մինչև հարկային խրախուսումներ և վերականգնվող էներգիայի ներդրումային փաթեթի սրանդարներ:

Նարավարներսկայան և Կենտրոնական Ասիայում ՖԷ փոխնալագիան համեմաբարար նոր է և անհայր: Աշխարհի այդ մասում րվյալ գործարարությունում գերիշխում են արտահամակարգային, փողոցային և ծովային անվրանգության կիրառումները (հաշվարկների համաձայն, պակաս քան 5 մեգաՎր րարեկան), ձևավորելով շուրջ 0.1%-ի մասնաբաժնով մասնակցություն համաշխարհային շուկայում: Նոր սկսում են հայրնվել էներգահամակարգին միացած ՖԷ կիրառումներ, որոնք սակայն չեն դեկավարվում և ոչ մի աջակցող քաղաքականությամբ կամ գրավիչ “ֆիդ-ին” սակագնով, բայց ավելի շուր ցուցադրական կամ փորձարկման նպարակներով: Միջին Արևելքի երկրները ցանկանում են րարաձաշրջանը դարձնել արևային բնագավառի արտադրության առաջարար հանգույց՝ շնորհիվ էներգիայի ցածր արժեքի, արկա առար հողարարաձքների և էժան աշխարածի: Նայրնի լավագույն նախաձեռնությունն է Արարական Միացյալ Էմիրարների “Մասդար” ծրագիրը, որը նախարեսում է ունենալ գիգավարրային արտադրությունով, չեզոք CO2 և գրոյական թափոնների մակարդակով մի քաղաք, որն ամբողջությամբ հույս է դնում արևային, հողմային և թափոններից սրացված էներգիայի վրա: Լայնաձավալ ուռչեցված գովագրից և մամուլում արված հաղորդագրություններից հեար, որոնք գովագրել են Միջին Արևելքը որպես արտադրության համար լավագույն րեղադիրք և ապրելու համար կայուն րեղ, այնրեղ վերջերս ամեն ինչ հանդարրվել է:

Ռուսասարանը չունի ՖԷ րեխնոլոգիայի շուկայի որևէ կայուն շարժիչ ուժ, սակայն լավ հայրնի է իր պոլիսիլիկոնի հզոր արտադրական բագայով: Մի քանի ընկերություններ (օրինակ, “Նիթոլ”, “Ագիյել”) կնքել են պոլիսիլիկոնի մարակարարման երկարաժամկեար պայմանագրեր աշխարհի առաջարար ՖԷ ընկերությունների հեար: Մյուս ընկերություններ մուրք են գործել գործարարության ներքևի /դուսարր/ օղակներ (օրինակ՝ Կրասնոդարում րեղակայված “Սոլար վինդ” ՄՊԸ, Ռյագանի “Մերարդախեցեղենի չափիչ սարքերի գործարան” բաժնեարիրական ընկերությունը, կամ Բոգորոդիցկի Տեխնոքիմիական սարանքների գործարանը) և սկսում են մողուլների արտադրությունը: Վերջին րարի Ռուսասարանի Դաշնության Պերական Դուման ընդունել է էլեկրականության գարգացման մասին օրենքի նոր խմբագրությունը: Այդ օրենքին

համաձայն, զանազան աջակցող միջոցառումներ, այդ թվում՝ «Ֆիդ-ին» սակագինը, օրենսդրական հիմք կստեղծեն Ռուսաստանում վերականգնվող էներգիայի զարգացման համար: Ունենալով այդպիսի պերական աջակցություն, ակնկալվում է 2020 թվականին մեծացնել վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժինը Ռուսաստանում ներկա 0.8%-ից մինչև 4.5%-ը:

Նարավային, Արևելյան և Նարավարևելյան Ասիայում գլխավոր շուկաներն են Ճապոնիան և Կորեան: Ճապոնիան դեռ գրավում է համաշխարհային շուկայի թիվ 2-ի դիրքը՝ տեղադրված կուրակային ՖԷ հզորությունների կրթվածքով, սակայն, հաջորդ երկու տարվա մեջ նրա այդ դիրքը կարող է վիճարկվել: 2008թ աճը գնահատվում է շուրջ 250 մեգաՎթ ցուցանիշով, որի արդյունքն է պակաս քան 2,200 մեգաՎթ կուրակային արտադրողականությունը: Շուկայի սահմանափակ աճի խնդիրները քաջ հայտնի են: Առաջինը, դա՝ ազգային սուբսիդավորման սխեմայի (արտադրամիջոցների ուղղակի աջակցության) ավարտն է 2005թ վերջում, իսկ երկրորդը այն է, որ տեղական արտադրության ՖԷ մոդուլները արտահանվել էին ավելի մեծ շահույթ ապահովող շուկաներ (Գերմանիա, Իսպանիա և Իտալիա), ի վնաս ներքին շուկայում էժան մոդուլների առկայության: Այնուամենայնիվ, կա ՖԷ-ի նոր խրախուսման ծրագրի հնարավորություն («Ֆուկուդա Վիժն»), որը կրկին խթանում է ներքին շուկան և արդյունաբերության հեղափոխական զարգացումը: ՖԷ համաշխարհային արդյունաբերության առաջնափուլը դառնալը Ճապոնիայի համար միշտ եղել է գլխավոր նպատակը, և Ճապոնիային հաջողվեց պահպանել այդ դիրքը ավելի քան 8 տարվա ընթացքում: Կառավարությունը գիտակցում է, որ բարձրաստիճան դիրքը կրկին գրավելու համար պահանջվում է ՖԷ-ի ազգային ծրագիր ունենալ: Այն առաջարկել է կազմել 300 միլիոն ԱՄՆ դոլար գումարով մի ծրագիր, դարձյալ ուղղակի կապիտալ աջակցման հիման վրա, որը սկսվելու է 2009թ սպրիլից:

Կորեան հանդիսանում էր չափազանց գրավիչ FiT սակագնով շուկա 2007թ և 2008թ: Սակայն դրությունը փոխվել է 2008թ հոկտեմբերի 1-ին, երբ 3 մեգաՎթ-ից մեծ ՖԷ համակարգերի համար FiT-ը կրճատվել էր 30%-ով: Նայարարարված սակագնային կրճատումը կշեղի ՖԷ շուկան մեծածավալ ՖԷ համակարգից դեպի 1 մեգաՎթ չափի կամ նույնիսկ ավելի փոքր ՖԷ էլեկտրակայաններ: Կորեայի կառավարության հայտարարությամբ, 2012թ հետո այն կփոխարինի FiT-ի ծրագիրը RPS սրանդարների քաղաքականությամբ: Նաշվի առնելով նվազեցված FiT-ը, ակնկալվում է, որ եթե մոդուլների գները կտրուկ անկում չապրեն, 2009թ մինչև 2012թ կորեական շուկան կունենա 20% աճի առավելագույն մակարդակը, հետևաբար 30%-ով պակասեցված FiT-ը կրկին գրավիչ կդառնա:

Այդ երկրներից բացի, սահմանափակ ու հաճախ ոչ գրավիչ ՖԷ ծրագրեր կան Նոդկաստանի մի քանի նահանգներում, Չինաստանի որոշ մասերում, Թայլանդում, Մալայզիայում, Սինգապուրում և Բնդոնեզիայում՝ որոնք առաջնորդվում են FiT սակագների խառնուրդով, հաճախակի միայն 10 տարի տևողությամբ, կամ ուղղակի կապիտալ աջակցումով: Տարածաշրջանը (հիմնականում

Կորեան և Ճապոնիան) գրադեցնում է համաշխարհային շուկայի մոտավորապես 11%-ը և ակնկալվում է, որ 2020 թ-ից հետո այն աճելու է Եվրոպայից ավելի արագ և նրանից առաջ կանցնի 2025թ -2030թ ժամանակամիջոցում:

Օգույուներ

Ի լրումն էլեկտրականության արտադրման և այն բնապահպանական օգույուներին, որոնք կարող է վրա էներգահամակարգին միացած ՖԷ-ն, գոյություն ունեն նաև այլ շոշափելի օգույուներ: Այսօր այն երկներ, որոնք վաղուց որդեգրեցին կայուն ՖԷ քաղաքականություն, սկսում են քաղել իրենց կատարած ներդրումների պտուղները: Դրանց թվում են ազգային մակարդակով տեխնոլոգիական հզորություններ, գրադվածություն, “կանաչ” թ էներգիայի արտադրություն (Կիտրոյի արձանագրության նշանակելի բավարարման իր մասնակցությամբ), նոր, մեծածավալ բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն, ինչպես նաև գրավիչ տեղական և համաշխարհային գործարարական հնարավորություններ: Նայաստանում էներգահամակարգին միացած ՖԷ կայանքների կամ արտադրության աջակցությունը քննարկելիս հարկ է գիտակցել գրադվածության և նոր արդյունաբերության հետ կապված օգույուները:

Զբաղվածության հետ կապված հնարավորությունները կարելի է մոտավոր ձևով բաժանել ՖԷ-ի սպասարկման և արտադրական հատվածների միջև: ՖԷ սպասարկման սեկտորը գլխավորապես կախված է ՖԷ-ին աջակցող քաղաքականությունից, մինչդեռ արտադրական հատվածը կարող է աճել շնորհիվ նրան, որ տեղական արտադրություն հիմնադրելու մեջ կան ուրիշ գրավիչ խրախուսումներ: Այդ սպասարկում աշխատատեղերի ներուժը էապես փարբերվելու է կախված արտադրվող քաղաքիչներից: Արտադրության որոշ տեսակներ, օրինակ՝ ֆոտոէլեմենտների կամ նրբաթաղանթային մոդուլների արտադրությունները՝ բարձր ավտոմատացված են, ուստի նրանցում մարդկանց մասնակցության պահանջը պակաս է:

Լավ զարգացած և աջակցող ՖԷ ծրագրի շնորհիվ կարելի է խրախուսել ուղղակի արտասահմանյան ներդրումներ (DFI): Նայքնի փաստ է, որ արտադրող ընկերությունների թվի մեծացում՝ այն էլ տեղական շուկայի հզոր քաղաքականություն ունեցող մի երկրում՝ խրախուսում է արտադրական օբյեկտների ստեղծում: Տեղադրման և արտադրության միասնականացումը ստեղծում է հնարավորություններ տեղական շուկայում տեխնոլոգիայի ընկալման համար, միննույն ժամանակ թույլ է տալիս կիրառել և փորձարկել տեղական արտադրության ապրանքները իրական աշխարհում: Տեղական տեղադրումների շնորհիվ բարելավվում են նաև տեխնոլոգիայի բնապահպանական օգույուները, քանի որ կրճատվում է բեռնափոխադրումների ծավալը, որը կպահանջվեր կատարել մինչև համակարգի տեղադրումը: Նայաստան ընկերություններ գրավելու համար հնարավոր է հարմարեցնել տեղական արտադրության գոյություն ունեցող խրախուսումները, էներգահամակարգին միացած ՖԷ տեխնոլոգիայի համար

պայմանները բարելավելու և էներգահամակարգին միացած կայանքների լավ աջակցվող շուկայի մեջ սահունաբար ինտեգրվելու նպատակով:

Առաջարկություններ Նայասպանի համար

Նայասպանում ֆոտոէլեկտրական բնագավառի զարգացումն ղեկավարելու համար արդյունավետ քաղաքականության մեխանիզմ նախագծելիս, հարկ է ուշադրությամբ հաշվի առնել հետևյալ չափանիշները.

պարզ մոտեցում, այնպիսին, որը կախված չէ աջակցման բազմաթիվ մեխանիզմների համադրությունից,

այնպիսին, որն խթանում է շահագործում և շարունակական աշխատանք;

այնպիսին, որն առաջարկում է երկարաժամկետ աջակցություն, հնարավորություն ստեղծելով և՛ արտասահմանյան և՛ ներքին արտադրամիջոցների ներդրումների համար և

արդյունավետ ու գործող խրախուսումների մեխանիզմ:

Այդ իմաստով “Ֆիդ-ին” (FiT) խթանող սակագինը դրսևորեց իրեն որպես լավագույն և ամենաարդյունավետ մեխանիզմ, ինչը հաստատել են փորձեր միջազգային գնահատումները:

Արևային բնագավառի շուկայում շարժիչ ուժերի օրինակներ

Արևային էլեկտրականության արտադրողական հնարավորությունների հիմնադրումը արագացնելու նպատակով իրականացվում են մի շարք կառավարական ծրագրեր: Այդ ծրագրերը ներառում են ուղղակի խրախուսումներ էլեկտրականություն արտադրող արևային նոր հզորությունների փեդաղոման ուղղությամբ, վերականգնվող էներգիայի օգտագործման պահանջները (այսինքն՝ Վերականգնվող Փաթեթի Սպանդարտներ), ինչպես նաև ավանդական արտադրության հետ կապված աղտոտման և/կամ արտանետումների վերահսկում կամ նրանց սահմանափակում, ներառյալ ածխաթթու գազի էմիսիաներ:

Արևային էլեկտրաէներգիայի հիմնադրման համար գոյություն ունեցող խրախուսման կառուցածքները ներառում են. Ներդրումային հարկային վարկեր, որոնք պակասեցնում են հարկային պարտավորությունները՝ արևային էներգիայի սկսվողների փեդաղոման արժեքի հիման վրա (օրինակ՝ ԱՄՆ): Խթանող “Ֆիդ-ին” սակագներ, որոնք պահանջում են էլեկտրականության համայնքային ծառայություններից գնել արևային կամ այլ վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրականություն այնպիսի գներով, որոնք բարձր են շուկայում գերիշխող գներից (օրինակ՝ Իգալիա),

- Արտադրության հարկային վարկեր, որոնք *կիրովարտ-ժամի համար* հիմունքով պակասեցնում են հարկային պարտավորությունը՝ արևային էներգիայի որակավորված աղբյուրներից արտադրված էլեկտրականության համար (օրինակ՝ Կալիֆորնիա):

ԱՄՆ-ում արևային էլեկտրաէներգիայի առևտրային, արդյունաբերական և համայնքային ծառայության համակարգերի համար գործում է 30%-ի դաշնային ներդրումային հարկային

վարկ (ITC), ինչպես նաև արևային բնագավառի ակտիվների [ունեցվածքի] հինգ փարվա արագացված արժենվագում: ԱՄՆ-ի դաշնային ITC վարկի ժամկետը վերջերս երկարաձգվել է մինչև 2017թ հունվարի 1-ը: Բացի այդ, գոյություն ունեն արևային բնագավառի խրախուսման մի շարք նահանգային ծրագրեր, որոնցից մի քանիսը գործում են նաև սպասարկման մասշտաբի արևային կայանքների համար:

- Իփայիա. Խահմանել է 2016 թվականին 16 գիգավատտարանոց արևային էլեկտրաէներգիայի արտադրողականության նշանակետ, վերականգնվող էներգիա արտադրողների համար էլեկտրականության նվազագույն գնով՝ ի լրումն խթանող “Ֆիդ-ին” սակագնի, որը որոշվում է նախագծի չափից ելնելով:
- Պորտուգալիա. Այդ երկիրն ունի էական արևային էներգիայի պաշարներ, ներմուծում է իր էլեկտրականության 85%-ը և կառավարության մակարդակով սահմանել է մինչև 2020թ 50-60%-ով վերականգնվող էներգիա արտադրելու նշանակետը:
- Ինդիա. Աջակցող քաղաքականությունները ընդգրկում են սերունդի հիմունքով սուբսիդիա և համայնքային ծառայության՝ վերականգնվող էներգիայի երկարաժամկետ PPA-ներ մտնելու մանդատներ [իրավագրեր]:
- Ֆրանսիա. Աջակցող քաղաքականություններ ներառում են ԱԱՏ-ի վերջերս ընդունված պակասեցում փոքր արևային համակարգերի համար և խթանող “Ֆիդ-ին” սակագին արևային էներգետիկայի ծրագրերի համար:
- Նարավային Կորեա. Վերջերս ուժի մեջ են մտել խթանող սակագներ, որոնց հավանական է կհետևեն վերականգնվող էներգիայի ներդրումային փաթեթի ստանդարտներ համայնքային ծառայությունների համար:

Արևային էներգետիկայի ծրագրերի զարգացման աջակցող՝ խթանող “Ֆիդ-ին” սակագներ գործում են նաև Ավստրալիայում, Գերմանիայում, Իսպանիայում և մի քանի ուրիշ երկրներում:

3.2 Նայաստանում տեղական ՖԷ շուկայի զարգացման – արտահանման ուղղված ՖԷ արդյունաբերության զարգացման գլխավոր արգելքների գնահատում

Գոյություն ունեցող էներգետիկ ենթակառուցվածքի շահագործումը գալիք փարիններում պետք է աջակցի առավել էներգաարար փոփոխության զարգացումը: Դա բարդ խնդիրներ է դնում էներգետիկայի հարվածի առջև, որը փառապում է հանաժող վառելիքի ներքին պաշարների բացակայությունից, ներմուծվող վառելիքից կախվածությունից, ոչ բազմաճյուղային մատակարարումներից և հարվածի արդիականացման ներդրումների պակասից:

2005թ հունիսին Նայաստանի կառավարությունը ընդունել է “Էներգետիկայի հարվածի զարգացման ռազմավարությունը”: Ռազմավարությունը նախատեսում է ավելի բազմաճյուղային դարձնել վառելիքի մատակարարումը և արտադրությունը: Այդ ռազմավարության համաձայն,

Էլեկտրականության արտադրումը հիմնված կլինի արտմային էլեկտրակայանի վրա, Տրագդանի և Երևանի ջերմային էլեկտրակայաններում՝ նոր բլոկերի, հիդրաէներգետիկայի, ինչպես նաև վերականգնվող էներգիայի աղբյուրների վրա (փոքր ՏԷԿ-եր և հողմային կայաններ): Նախատեսվում է ապահովել մոտ 10 միլիարդ կՎտ.ժ/վրաի համընդհանուր արտադրություն 2025 թվականին:

Նայաստանում օրենսդրությամբ սահմանում է, որ երկիրը պետք է զարգացնի ներքին էներգիայի աղբյուրներ, հատկապես՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներ (ՎԷՆ): Ընդհանուր առմամբ ՎԷՆ-ի զարգացումը գլխավորապես առնչվում է կանոնակարգող շրջանակների հետ: Նամաձայն «Նամայնքային ծառայությունների կանոնակարգող մարմնի մասին Նայաստանի Նանրապետության Օրենքի» էներգետիկայի հարվածի կանոնակարգում իրականացնում է ՏՏ Նամայնքային ծառայություններ կանոնակարգող հանձնաժողովը, որը պարասխանաբար է սակագների սահմանման, արտոնագրերի թողարկման և հարվածի միավորների գործունեության մոնիտորինգի համար: Վերականգնվող էներգիայի աղբյուրներով աշխատող և էլեկտրականություն արտադրող կայաններ պետք է օգտվեն արտոնյալ սակագնային ռեժիմներից, որոնք ավելի բարձր են քան արտադրության միջին սակագինը էներգահամակարգում:

Տվյալ պահին Նայաստանում չկա արևային էլեկտրաէներգիայի սակագին, բացառությամբ մինչև 150 կՎՊ արտադրողականությամբ այն ՖԷ կայանների համար, որոնք գործում են «գույք չափման» սկզբունքով: Վերջինների համար սակագին սահմանված չէ, սակայն րերը կարող է օգտվել ավելցուկ էլեկտրաէներգիա էներգահամակարգ «լցնելու» և նույն քանակություն անվճար հետ սրանալու հնարավորությունից: Ներկա կանոններով էներգահամակարգին միացած բոլոր կայանքներից թույլվություններ և արտոնագրում չի պահանջվում:

Այնուամենայնիվ, ՖԷ արդյունաբերության զարգացում արգելակող խոշոր արգելքները կապված են ներդրումային ռիսկերի հետ, որոնց թվում են. թերզարգացած տեղական շուկան, սուբսիդավորվող էլեկտրականություն, սահմանափակ ելք դեպի փարածաշրջանի շուկաներ և արժույթի հետ կապված ռիսկեր:

Պերական աջակցության պակաս. Չնայած որ Նայաստանի «Օրենքը էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին» շեշտում է Նայաստանում վերականգնվող էներգիայի զարգացման կարևորությունը, բացակայում են Նայաստանում վերականգնվող աղբյուրների զարգացում խթանող ինստիտուցիային խրախուսման փաթեթներ (օրինակ՝ հարկային արտոնություններ, պետական սուբսիդիաներ, կամ պարտադիր պահանջներ ու սրանդարներ):

Նախագծերի ֆինանսավորման դժվարություններ. Տեղական բանկերը ծանոթ չեն վերականգնվող էներգիայի հարվածի հետ, բացառությամբ մի քանիսի, որոնք իրենց չեն կարող թույլ տալ «մեղմ» պայմաններով էական փոխառություններ փրամադրել: Ցավոք, Նայաստանի արևային էներգետիկայի գործարարության մեջ ներդրողներ նույնպես չեն կարող օգտվել որևէ առևտրային

խրախուսումներից, պերական դրամաշնորհներ ներառյալ: Օրինակ, արևային էներգիայի ջերմային գործարարության ծրագրերը կամ վերականգնվող էներգիայի արտահանակարգային այլ նախաձեռնությունները մեծամասնությամբ ֆինանսավորվում են միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցով՝ սոցիալական կամ պերական սեփականություն հանդիսացող արևմտասերում: Ներկայումս կառավարությունը միջազգային դոնոր կազմակերպությունների հետ բանակցում է «մեղմ» առևտրային փոխառություններ առաջարկող ծրագիրը (Նամաշխարհային բանկ, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ և ուրիշներ): Այդ առնչությամբ 2006թ հիմնադրվել է R2E2 հիմնադրամը՝ վերականգնվող արտադրության համար ֆինանսավորում հայթայթելու և շրջանառու միջոցները շահագործելու նպատակով: Ներկայումս հիմնադրամը ֆինանսավորում է փոքր հիդրոէլեկտրակայաններ, գլխավորապես առաջարկելով փոխառություններ 5-7 տարով, արտադրամիջոցների արժեքի մինչև 70%-ով, սահմանելով մինչև 12% տարեկան տոկոսադրույք: Մի բանի առևտրային բանկեր առաջարկում են վարձակալման մեխանիզմներ, որոնք, ներկա պահին, կիրառելի են հիմնականում գյուղատնտեսական սարքավորումների համար, իսկ շարք բանկեր առաջարկում են վարկեր կենցաղային սարքավորումների համար, որոնցից և ոչ մեկը չի առնչվում արևային էներգիայի համակարգերի հետ:

ԱԱՏ-ի հարցեր. Մյուս խնդիրն է 20 տոկոս ԱԱՏ վճարելու պարտադիր պահանջը, որը գումարվում է սարքավորումների – մեքենաների մաքսային 10% վճարումներին: Էլեկտրոնիկայի բաղադրիչների մեծ մասի դեպքում պահանջ կորվի անցնել Պերական Սրահարպարների Ինստիտուտում սրահարպարացման գործընթացով:

Փոխադրումներ. Փոխադրումներ ունեն որոշակի սահմանափակումներ և ներկայումս Նայաստան խոշոր բեռնարկներ [կոնտեյներներ] փոխադրվում են Վրաստանի Սևծովյան նավահանգիստներից կամ Իրանից: Սովորաբար կարող է պահանջվել մինչև չորսից հինգ շաբաթ Եվրոպայից Նայաստան կոնտեյներ առաքելու համար:

Ներդրումային ռիսկեր. Գոյություն ունեն ռիսկեր, որոնք կապակցված են արտադրության փոխանակման անկանխատեսելի դրույքաչափերի հետ (դրույքաչափերը կարգավորվում են Կենտրոնական բանկի կողմից): Դա անորոշակիություն է սրահարպարում արտահանմանը միտված ցանկացած արդյունաբերության համար:

Մյուս կողմից, արտասահմանյան ներդրողներ կարող են օգտվել ներդրումային նույն ռեժիմից, ինչը և արևմտյան ներդրողներ, և նրանց հետ կվարվեն նույն կերպ: Իր փոքր չափերին չնայած, Նայաստանյան շուկան բաց է նոր շուկայամուտի համար և կարող է համարվել հենահարթաբ՝ դեպի Վրաստան, Իրան, Կենտրոնական Ասիա և այլ երկրներ ընդլայնվելու համար:

3.3 Առաջարկություններ Նայասպանում ՖԷ արդյունաբերության զարգացում արգելաբող հնարավոր խոչընդոտներ հաղթահարելու ուղղությամբ

Տնտեսական իրագործելիության փասանկյունից, փվյալ փուլում Նայասպանում արևային էներգիայի ծրագրեր կենսունակ չեն լինելու: Անկախ նրանից, որ “Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին օրենքը” դիպում է վերականգնվող էներգիայի զարգացումը Նայասպանում որպես առաջնահերթություն, չկան այդ բնագավառ ներդրումներ գրավող խրախուսումներ և որևէ խթանող մեխանիզմ: Առաջին հերթին, Նայասպանի կառավարությունը նախատեսում է զարգացնել և վերասարքավորել գազային սեկտորը և կառուցել նոր սպրտակայան (չնայած չեն ներգրավվում արտաքին ազդակների հետ կապված ծախսեր): Երկրորդը՝ պեմական բյուջեն պակասորդ ունի և հարկադրված է շեշտ է դնել գերակայության այլ ոլորտների վրա, այդ թվում՝ սոցիալական ծառայությունների, ենթակառուցվածքի զարգացման և այլն: Այդ ամենը լավատեսություն չի ներշնչում կառավարական ներկա աջարկության կապակցությամբ:

Նայասպանում արևային էներգիայի օգտագործման գլխավոր դրոպապարճառները կապված են երկրի ամբողջ փարածքում կարարյալ մեկուսացման մակարդակների առկայության հետ: Մյուս գրավիչ գործոնն է ամբողջ փխնտոգիական շրթայի ընդգրկմամբ արդյունաբերության հիմնադրման համար հումք նյութերի և ենթակառուցվածքի առկայությունը՝:

Նայասպանի արևային էներգետիկայի մեջ ներդրումները կարելի է արագ ընդլայնել հետևյալ միջոցառումների իրագործման պայմանով. (i) հիմնավորված կառավարական խրախուսումներ, (ii) արևային էներգիայի բաղադրիչների օրենքով պարտադրվող կիրառում ամեն փեղ, ուր նրանք փխնիկապես իրագործելի են, (iii) սպրանքի արժեքի էական նվազեցում, (iv) էներգահամակարգին միացած կիրառումների համար գրավիչ սակագին, (v) արտոնագրման [լիցենզավորման] պարզեցված ընթացակարգեր:

Այս հաշվարկության երկրորդ բաժնում կարարված SWOT վերլուծությունը թվարկում է այն հնարավորությունները, որոնցից Նայասպանը կարող է օգտվել ՖԷ արդյունաբերություն զարգացնելու համար: Միաժամանակ, հնարավոր սպառնալիքների հետ կապված խնդիրների լուծման ռազմավարություն կորող է ընդգրկել հետևյալը.

- բարենպաստ նորմատիվային /կանոնակարգող/ և խրախուսման կառուցվածքին ուղղված գործունեության խթանում և շահախմբային աջակցում /լոբբինգ/,
- շուկայի զարգացում փեղական և փարածաշրջանային մասշտաբներով,
- հասարակության փեղեկացվածության արշավ,
- գիտելիքների փոխանցում և համապարասխան փխնտոգիանների կիրառում,
- ներուժի կառուցում և կրթական ծրագրեր
- սպրանքի արժեքի նվազեցում

գործիք կարող է լինել համայնքային ծառայություններին հարկադրելը՝ իրենց փաթեթում վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրության նվազագույն փոկոս ներառելու և այլն:

Մանրաձախ վաճառքի ֆինանսավորում. Պեքությունը կարող է հանդես գալ նախաձեռնություններով, ըստ որոնց առևտրային բանկեր կառաջարկեն գրավիչ ֆինանսավորում՝ արտահանակարգային կիրառումների մանրաձախ վաճառքի համար:

Պերական խրախուսումներ հարկային քաղաքականությունում. Վերջապես, պեքությունը պարտավոր է գրավիչ պայմաններ առաջարկել ՖԷ արդյունաբերության զարգացման համար, օրինակ՝ փեխնոլոգիական մեքենաների “բեռնման” ԱԱԿ-ի չեղյալ համարելը, ՖԷ արդյունաբերության համար արտոնյալ շահութահարկեր, հարկազերք ժամանակահատվածներ և այլն: Ավելի մեծ ուշադրություն հարկ է դարձնել FOREX⁵ քաղաքականության վրա՝ արտահանմանն ուղղված փրկական արդյունաբերության աջակցելու նպատակով:

4. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Արևային էլեկտրահամակարգեր հնարավորություն են ապահովում՝ գնի փրկանկյունից արդյունավետ կերպով մեծացնելու էլեկտրականության արտադրողականությունը, միաժամանակ խուսափելով շրջակա միջավայրի քայքայումից, որը բնորոշ է ավանդական էլեկտրակայանների շինարարության և շահագործման համար: Արևային էլեկտրաէներգիա արտադրող արդյունաբերություն ունի էական աճի ներուժ: Նիշենք, որ 2020 թ-ին արևային բնագավառի ապագա շուկան հաշվարկների համաձայն կապահովի առվազն 30 գիգավատ փարեկան: Շուկայական ներկա պայմաններում Նայասպանում արևային էներգիայի զարգացումը հարցական է թվում այն պարճառով, որ պահանջում են սկզբնական մեծ կապիտալ ծախսեր և որ գոյություն ունի բնական գազի և արոմային կայաններից արագվող էլեկտրականության ծախսերի սուբսիդավորման իրավիճակը: Պահանջվում է միջազգային կազմակերպությունների և կառավարության օգնություն՝ օրենսդրական միջավայրը բարելավելու համար, որպեսզի այն կարողանա խթանել արևային էներգիայի փեխնոլոգիաների և ՖԷ արդյունաբերության զարգացումը: Մյուս կարևոր քայլ է սպրանքի արժեքի նվազեցումը, փրկական և փարածաշրջանային շուկաների զարգացումը: Եթե այդ քայլերն արվեն, ապա փրկական հումքի հիման վրա ՖԷ արդյունաբերության զարգացումը կորող է փոփոխապես կենսունակ դառնալ: Այս հերագորության հիմնական արդյունքները հետևյալ են.

- a) Նայասպանն ունի արևային էներգիայի զգալի ներուժ: Տարվա մեջ լինում է 2500 արևոտ ժամ, իսկ փարեկան միջին ինսոլյացիան հորիզոնական մակերևույթում կազմում է շուրջ 1720 կՎտ.ժ./մ²:

5 ԶԻՊԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԾԻՅ

- b) Ներկայումս արևային էներգետիկայի զարգացումն իր սկզբնական փուլում է գտնվում:
- c) Վերջին տասնամյակի ընթացքում մեջ հայաստանի տնտեսական զարգացումը էական է եղել պետական քաղաքականության, տնտեսական բարեփոխումների, ֆինանսական կայունության զգալի աճի, արդյունաբերության տարբեր հարվածների զարգացման և ազատականացման գործընթացների շնորհիվ:
- d) Ներկայումս հայաստանում էներգետիկայի գները ցածր են ի համեմատ միջազգային շուկայի՝ բնական գազի ցածր գների և էլեկտրականության կիրառվող սակագների արդյունքում: Էլեկտրականությունը մարզերի է բոլոր բնակելի տարածքների, ծառայությունների և արդյունաբերության համար: Փաստորեն՝ հայաստանին կարելի է դասել աշխարհի այն լավագույն երկրների շարքին, ուր ընդհանուր էներգահամակարգով ծածկվում է ամբողջ երկիրը:
- e) Հայաստանի կառավարությունը շեշտում է երկրում վերականգնվող էներգետիկ զարգացման գերակայությունը թե՛ կանոնակորգող, և թե՛ օրենսդրական մակարդակներում: Այնուհանդերձ, չկան իրական խթանող մեխանիզմներ, որոնք ի վիճակի են խթանել այդ նոր հարվածի զարգացումը: Միաժամանակ, արտասահմանյան ներդրողներ խրախուսվում են մուտք գործելու տեղական շուկա և կարող են գործել տեղական ընկերությունների հետ հավասար պայմաններում:
- f) Արևային տեխնոլոգիաներ խթանելու կառավարության աջակցությունն ունենալով, հնարավոր կլինի զարգացնել արևային էներգետիկայի ՖԷ շուկան տեղական պայմաններում, ինչպես նաև զարգացնել ՖԷ արդյունաբերություն արտահանման շուկաների համար:

Շուկա ներթափանցելու հաջողությունը կախված է մրցակցական գնորոշումից, որակից, երկարակեցությունից, հուսալիությունից, արագ առաքումից, օգտագործողների վերջին օղակի համար լրացուցիչ օգուտներից, առկա արգելքների վերացումից: Հայաստանը գերազանց վայր է ՖԷ ապրանքների արտադրության համար մի քանի պայմաններով, այդ թվում. քաղաքական տեսանկյունից կայուն, ծագող տնտեսություն, հումքի մարզերի զերազանց մակարդակ (բարձրորակ ավազ ու նաև քվարց), համեմատաբար էժան աշխատուժ, էլեկտրականության ցածր արժեք, առատ հողատարածքներ էժան գներով և բազմաթիվ այլ աջակց գործոններ: Սակայն պետք է գիտակցել դեպի ծով ելք չունեցող դիրքի և գլխավոր շուկաների դժվար մարզերի թերությունները:

Չնայած շուկայական տարբեր ռազմավարություններում առաջարկվում են տարբեր գնային շղթաներ, «Ա» կետից մինչև «Ֆ» կետը տեխնոլոգիական շղթայով ՖԷ մոդուլներ որպես վերջնական ապրանք մշակելու ռազմավարությունը կարող է ճկունություն հաղորդել արդյունաբերությանը

(երբ մոդուլների արտադրությունը հիմնված կլինի պոլի-Si/ՋՄԳ խառը շղթայի վրա) ուրիշ “շղթաների” ապրանքներ մատակարարելով երբ որ դրանք մրցունակ լինեն:

Արտահանմանն ուղղված ՖԷ արդյունաբերության և տեղական շուկայի զարգացումը Նայասրանում գլխավորապես կախված է բարենպաստ կանոնանկարգող և օրենսդրական հիմքից, այդ թվում. գրավիչ սակագին, պարտադիր սրանդարտներ կամ RPS, պետական խրախուսումներ և հարկային արտոնություններ: